

ՆԱՐԵԿԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 18ՐԴ ԴԱՐՈՒՄ
ԵՒ ՆՐԱ ԱՐՏԱՑՈՒՔԸ
ՊԱԼՏԱՍԱՐ ԴՊՐԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԷԶ

Եւ թէսէտ վախճան ընկալայց իր զմահացու՝
Այլ յարակայութեամբ բանի այսր սովերի գրեցայց կենդանի՝
Գրիգոր Նարեկացի

Գրիգոր Նարեկացու նկատմամբ հայ ժաղովրդի ունեցած դարերի պաշտամունքը՝ նարեկացիական շարժման մը իւրօրինակ կերպարանք է սուանում 18րդ դարում։ Համարեղ քնարերգակը ուշադրութեան է արժանանում գրեթէ բոլոր կողմերով։ Բնդրինակւում եւ միաժամանակ, յատուկ հոգատարութեամբ, հրատարակւում եւ վերահրատարակւում են նրա անունով մեզ հասած երկերի մեծարդոյն մասը՝ «Մատեան ողբերգութեան» պոչմը, մի շարք ճառեր, ներբողեաններ, մեկնութիւններ, զանձեր։ Տպագրուում են նրան նուիրուած զրոյցներ, բանաստեղծութիւններ, նրա երկերի մեկնութիւնները, լուծմունքները, գրուում են նորերը։ Կատարուում է մի անսախադէպ երեւոյթ։ Միայն «Մատեան ողբերգութեան» երկը 18րդ դարում տպագրուում է աւելի քան տասը անդամ։ Նարեկացու կեանքի եւ գրական ժառանգութեան ճանաչման ու գնահատման հարցում առանձնայատուկ սէր, նախանձախնդրութիւն են հանդէս բերում հայ կրօնապայակին լուսառական, կրթական շարժման նուիրեանները՝ մատենագէտներ, արտուածարան - փիլիսոփաններ, բանասէրներ, բանաստեղծներ, ուսուցիչներ, բժիշկներ, վաճառականական մտաւորականութեան ներկայացուցիչներ, խոշոր հրատարակիչներ, տպարանատէրեր, սրբագրիչներ եւ այլք։

Հոգեւոր գործիչ, մատենագէտ բանաստեղծ, սուլթանական բըռնապետութեան գատավճռով գլխատուած կոմիտաս Քէօմուրճեանը ընտիր գրչութեամբ ընդօրինակւում է նարեկացու վարքը, «Մատեան»ի լուծմունքն ու բացատրութիւնքը եւ այլ նիւթեր։ «Գիրքն է ձեռամբ գրեալ յերանելոյն կոմիտասայ Քէօմուրճեան քահանայէ

եւ նահատակչ»։ «Յամենայն ժամ վառք եւ դոհութիւն քեզ, Տէր Յիսոս Քրիստոս, գրում է Կոմիտասը իր Յիշատակարանում, - որ ոչ թողեր անկատար մնալ Հոգեւոր բուրաստանիս եւ յոդնածաղկեաց պարտիղիս, այլ ետուր կարողութիւն ինձ մեղաւորիս, ըստ բարեյօժար կամաց իմոց հասանիլ ի վճար եւ ի յաւարոտ»։ Ժողովրդական ուսուցիչ, բանաստեղծ (Արդար վարժապետ մականուանեալ) Յովհաննէս Կարնեցին, դարձեալ ընատիր գրչութեամբ, համառօտում է «Մատեան ողբերգութեան» երկը, նրանից մի գեղեցիկ փունջ, Նարեկացու դիմապատկերով եւ այլ զարդանկարներով հանդերձ, յանձնում ընթերցողին։ «Կարողութեամբն Վաստուծոյ, - գրում է նա, - առարտեցաք այս ամենացանկալի գրքուկս Հոգեցոյց եւ լուսափայլ բանից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Հրեշտակական վարդապետի, սակայն ո՛չ բոլորովին, այլ մասն ինչ։ Իբրու մտեալ ի լուսափայլ ծաղկալի բուրատատանս, այսինքն ի Հոգեկեցոյց մատեանս նորին եւ առեալ քանի մի ազնիւ, անուշահոտ, կենսաթուր ծաղիկ եւ վարդ կեղեցիկ՝ փոխադրեցաք աստ եւ գրեցաք սոյն տօմսակիս, ի ինորոյ աղջիւ եղոր մերոյ վայրելչանկատ մետաքսադործ տիրացու Ցովհաննիսի, որ յոթ վասփառանօք եւ ըդամատչոր աիրով գրել ետ...»²։ Հնդկահայ գործիչ եւ բանաստեղծ Խջնատիս Զուղայեցին իր տարագիր կեանքի ողջ ընթացքում, իբրև վշտաց միմիթարութիւն, իր մօս է պահում «Մատեան ողբերգութեան» մի ընտիր ձեռագիր եւ 1763 թուականին գալով Վենետիկ իր ինայած միջոցներով եւ Մինթարեանների օգնութեամբ, տպագրում այն։ «... Ես Ճուղայեցի մահատեափ Տէր Խղնատիս Զուղատեանց տրուաք քահանայ, - գրում է նա, - որ բազում ժամանակս ի Հնդիկս կեցեալ եւ... արրոյն Սաղիմայ շրջեալ եւ ի սուրբ Աթոռոն Հոռովմայ համեալ եւ անտի ի Վենետիկ, յայս ամենայն վայր պանդիմութեան լայս գիր կալայ ինձ վշտաց միմիթար եւ իմթան հեղացեալս անձին, այժմ ի փոխարէն բազմապատիկ երախտաց ի քարերար Տեառնէ, առ իս եղելոց զամենայն ժամանակս պանդիմութեան իմոյ, յօժարեցայ գհողենուագլ բանս ինչ արօժից գրոյս տպագրեալ յօժարամիտ ծախիւք՝ նուէր ընծայել բարեպաշտութեան աղօթասէր եղբարցդ, ի հոգեւոր յիշատակ ինձ եւ իմոցս առհասարակ»³։

Իզնատիոս Զուղայեցին տպագրում է «Մատեան»ը՝ ո՛չ ամբողջութեամբ, այլ, իբրև հմտան նարեկագէտ, գործնական նկատառումներով, ընտրում է առաւել աղջու եւ գեղեցկագոյն հատուածները եւ մի ընտիր փունջ կարգում։ «Ո՛չ զամենայնն բովանդակ ինձ եւ

1. Վենետիկ, Մինթարեան Միարանութեան Մատենագարան, ձեռ. թ. 119, էջ 1։

2. Մաշտոցեան Մատենագարան, ձեռ. թ. 8422, էջ 93։

3. Բամել աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկայ վամից վանականի, Վենետիկ, 1763, էջ 4։

այլ քաղեալ ընտրանաւ գառաւել կարեւորսն եւ գլխակարգեալ ըստ պատշաճի շաբաթու աւուրց, եւ ըստ պէս-պէս պիտոյից հայցուածոց, եւ որպէս թէ յընդարձակ բուրաստանէ՝ փունջս փունջս ծաղկանց հաւաքելոց առաջի ընծայեալ, զի ի պատրաստի ունիցին՝ որք փափաքինն վայելել յանուշահոտութիւն զուարթարար բանիցս»⁴:

Իդնատիոս Զուղայեցին իր թափառական կեանքի պատմութիւնը հանգամանօրէն ներկայացնում է նաև «Մատեան»ին կից «Յիշատակարան ոտանաւոր չափով» բանաստեղծութեան մէջ: Այսուղ հեղինակը պատմական ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում Միխթարեան Միաբանութեան մասին, մեծապէս զնահատելով այն դերը, որ Միաբանութիւնը կատարում էր Հայոց դրական, կրթական շարժման եւ տպագրութեան մարզում:

«Վայելուչ վանք կայ աբբայեան,
չորք անկիւնի եւ պատուական,
եղբարք ամէն ի սէր միաբան,
առաջնորդին հըսկատակ կան:
Տէր Աստեկանէ Հայր հոգիւոր,
նոյնոյ վլանիցն մեծաւոր,
հիքոյս պատիւ եցոյց յորով,
գինողիր արտիս կառարելով»⁵:

Իգնատիոս Զուղայեցին այսուեղ էլ ջերմ տոռեր է ձօնում Միխթարեանների ջանքերով տպագրուած (1763 թ.) «Մատեան ողբերգութեան» անմահ հեղինակի յիշատակին: Տարագիր հայ բանաստեղծը ոտանաւոր պարզ հանգի ու չափի մէջ, պատմողական եղանակով ներկայացնում է այն ընդհանուր տէրը, որով համակռւած է եղել հայ մտաւորականութիւնը «Մատեան ողբերգութեան» նկատմամբ եւ այն մեծ պահանջը, որ եղել է ժողովրդի մէջ «Մատեան»ը կրկին ու կրկին տպագրուած տեսնելու համար.

«Բարուն պայծառ եւ ցանկալի,
տէր սուրբ Գրիգոր Նարեկացի,
միշտ առ Աստուած հոգւով խօսի,
բանք իւր ընտիր՝ համուրց յարտնի:
Ցանկացայ ես կաթողնելով,
ովհեր սուրբ աղօթս տըպագրելով,
քանզի կայի յայն կարօտով,
բազմաց ի նոյն փափագելով»:

4. Անդ, էջ 4-5:

5. Անդ, էջ 309: Տես նաև Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ, Հայկական մոր մատենագիտութիւն եւ համբագիտարան հայ կետամիկ, Վենետիկ, Ս. Ղազար, 1909-1912, էջ 495-498:

Տարադիր հայ մտաւորականը իր արտիք խօսքն է ասում Նարեկացու մասին, «Մատեան»ը գնահատում իրեւ մարտկանց «Թմրաց հռդիները» պթափեցնող, արիութիւն ներարկող մի առեղծագործութիւն, որի կենական յոյժը զգացել է եւ ինքը, իր ողջ իմացական կեանքում.

«Իւծեալ եմ ես մեղօք նուաստ,
թերեսա վիցի հոգւոյն նպաստ,
զթմրեալ հոգիս առնէ զբաստ,
որք մտանենն ի յայս դարաստ:
Փտեալս մեղօք անկեալ անոյժ,
ինձ վայելէ աւազ եւ գոյժ,
զի վատասիրտ եմ, չունիմ ժոյժ,
վասն արն յաւէտ յաճախէ առոյժ:
Քանքարաթագոյցս անահ ծառայ,
ինձնարտիոս արուազ քահանայ,
մարդասէր Տէր, ինձ ողորմեա՛,
աղաչանօք առւրբ Նարեկայց⁶:

Նոյն 1763 թուականին «Մատեան»ը ամբողջութեամբ, լուծմունքի եւ բացատրութեան հետ միարին տրագուռում է նաև Պոլսում՝ Ակնեցի մահատեսի որդիի՝ հացադործ երամի՛ արդեամբ եւ ջանասիրութեամբ: «Մատեան»ը՝ պրում է հրատարակիչը, քաղցր է քան զմեղու խորիս՝ կրից ճաշակելեաց, ախորժելի քան զաեղան յոդնախորտիկ՝ աչաց տեսանելեաց եւ յաճախսագին քան զակունս պատուականս հոդեւորական վաճառականացյ»: Յէշատակադիրը գնահատում է «Մատեան»ի քարձը արուեստը եւ ընդունում նրա յարակցութեան փաստը Աստուածաշնչի հետ. «Զոր պեղեցիկ յօրինեալ մարդարտորէն շարահիւաեց երամելի վարդապահու... սուրբ զբոց վկայութեամբ, խորագոյն մտօք, ոլրեխալ ոճով, բառակապ յօրինուածով եւ հոետորական պիեճարանութեամբ, իբրեւ մարդարիտ լուսափայլ եւ պատուականն պիեճարերեալ զսա յանյատակ ծովէ Աստուածաշունչ գրոց... որ զմիրտս մտառու վերծանողացն իւրոց ի տիպ կարողութեան մոմոյ փոխարկեալ, յաչաց անոի նոցին մաքուր արտասուս թորացուցանէ»⁷:

Ինչպէս աեսնում ենք Նարեկադիսութիւնը վթեւածում է նաև յիշատակարանային գրականութեան մէջ. գա զալիս է Հնից եւ 18րդ դարում մի նոր որակ է ստանում:

6. Անդ, էջ 309-310: Մատեանակարանի թ. 8793 ձեռագրում, էջ 185ա-188բ, Յարութիւն Տէր Սիմոնեանը՝ իզնատիս Զուղայեցու սոյն չափածոյ յիշատակարանը օգտագործում է՝ յարմարեցնելով իր կենագրութեանը:
7. Գիրք ազօթից... Գոլիս, թ. 1763, էջ 688:

1763 թ. Պոլտամ վերաբռաստարակուող «Մատեան»ի վերջում Յակոբ Նալեանը ներդնում է նաեւ Նարեկացուն վերագրուող «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ...» երկե՝ քաղելով մի հին ձեռագրից. «Յաւելեալ ի սմա, - գրում է հաւատագակիչը, - դժիրք իմն փոքրիկ սոյն հեղինակիս, որ կոչի Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ Վարդանայ դիւանադպրի յօրինեալ, որ քաղաքիս մեծի աստուածաբան պատրիարքն չնորհելովն եղաւ ի վերջոյ»⁸:

Նալեանը իր վրայ է վերցնում նաեւ բնագրի սրբագրութեան դժուարին գործը. «Զեղ նարդենիս, - գրում է նա, Ծանուցումն առ աստուածասկը եւ ընթերցասկը անձինչ խորագրով իր առաջարանում, - եւ զայս գանձն ծածկեալ եւ զայդիւրս կնքեալ կամելով ի լոյս ածել եւ իբր յուկեղին ասփորդ վքաղեարս մանամայ ախորժափորդ կոկորդաց ձերոց ի վայլումն տալ, այսինքն, դտեսրակս լի արդեամբք՝ արդիւնաոր հրեշտակական վարդապետին եկեղեցոյ՝ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, զոր ի խնդրոյ Վարդանայ դիւանապարհին Սէնէքարիմայ Արծրունեաց արքայի՝ արքունական հրովարտակաց գծագրողին յարմարեալն էր՝ մեկ ըստ խնդրոյ ոմանց հոգեսէր բարեպաշտաց հրաման տալով տակեցման, զոր եւ սրբագրեալ ձեռօք մերովք, ի լրումն բազմանաց նոցա ըստամբայել թոյլ տուաք»⁹: Մի կորմ թողնելով երկի հեղինակային պատկանելութեան հարցը, որով կը գրաղուեն արդի Նարեկացիարդէտները, նկատենք միայն, որ Նալեանը բարոյաբէտ-պատմաբէտի հայեացքով է դնահատում այս երկը եւ արժանի յարգանք մատուցում ոչ միայն հեղինակին, այլ նաեւ մեկնասին՝ «Բարեպաշտ իշխանակետ Վարդան դիւանադըպրին»: «Ուրեմն, - գրում է Նալեանը, - այսու գրքիւս ոչ միայն դովելի է սուրբն Գրիգոր Նարեկացին... այլ եւ գովելի է անձն խընդուողին, բարեպաշտ իշխանին, Վարդանայ դիւանադպրին», որ թողեալ գհուս արքունեաց գործոց (ոչ ըստ մոլեկանաց՝ յլստուծոյ զգանձն խնդրեաց ի լրումն անկատարից մեղաց), այլ ի պաշտօնէ է նորա գհուեկեցոյց տետրակա զայս աղերսեաց...»¹⁰:

«Մատեան»ի այս հրատարակութիւնը ուշագրաւ է նաեւ մի այլ կորմնակի պատմութեամբ: Նրա մի օրինակը, որ այժմ պահպաննում է Մաշտոցի անուան Մատենադարանի հնատիպ գրքերի 580 թուահամարի տակ, անձնապէս պատկանել է 18րդ դարի զինուորական նշանաւոր բժիշկ («ի գնդի զինուորաց եւ զատաստանատանաց»): Պետրոս Յովհաննէսի Քալանթարեանին (ծն. 1735 թ. Զուղայում): Նա

8. Անդ, էջ 639:

9. Անդ, էջ 480:

10. Անդ, էջ 482:

«Մատեան»ի վերջին ազատ թերթի վրայ թողել է «Աղքաբանութիւն կարճառօս վասն ցեղին իմոյ» սկսուածքով Յիշտակարան, որ օդտակար է նաև գարի հայ թժչութեան, հայուսական յարաքերութիւնների պատմութեան ուսուանափութեան համար : «Մատեան»ի իր այս օրինակը, ահա, զինուորական թժչկ Պետրոս Քաղանթարեանը ջերմագին սիրով ու յատուկ պատուէրով նուիրում է իր միակ դըստերը՝ Մարիամին . «Աստանօր պատուիրելով պատուիրեմ քեզ, աիրեկի եւ գեղեցիկ դուստրդ իմ Մարիամ, — գրում է հայրը աղջկան, — զի այս հրաշագործ եւ երկնապարգեւ սուրբ Նարեկ աղօթից գիրքս յաղբաց յաղբս, ի տանէ մերմէ մի՛ պահասեացի, զի ահա զայս լիցի քեզ յինէն աւանդութիւն, որ զսա ունիցիս պահել պատուով, որ եւ պարտի միշտ յաւիտեան յաւիտենից մնալ ի յաղբի մերում ի պահպանութիւն տանց եւ ի յաջողութիւն վարելուաց : Ա՛րդ, խնդրեմ ի ձէնջ ո՛վ ընթերցողք, զի ի յընթեռնուպն ձեր զսոյն հրաշաղործ սուրբ Նարեկս եւ ի օպտիլն ի ամանէ, յիշեսջեք եւ զիս միով Հայր մերիւ, որով եւ գուռք յիշեալ լիշեք ի Քրիստոսէ, ամէն : Որ եմ ամենախոնարհ ծառայ նուաստ թժչկ Պետրոս՝ որդի Յովհաննիսէ Քաղանթարեան Զուղայցի, ի թիւն Փրկչին 1804, յամաեան Մայիսի 20, Մօսկով»¹¹ :

Ողջ միջնադարում «Մատեան»ի նկատմամբ ունեցած պաշտամունքը 18րդ դարում այնքան է ուժեղանում, որ հրատարակիչները «Մատեան»ը տպագրելու ժամանակ նաբեկացու դիմապատկերը «Կանոնական եւ փառազգական յօրինուածքով», «բազում ջանասիրութեամբ» փորազգուած են եւ անհճայ նուիրաքերում ժողովրդին : Աղդամունքը այս գործի նախաճեռնուպթեան պատիւը պատկանում է Պոլսի հռչակաւոր տպարանատէր Աստոածատուր Կոստանդնուպոլիսեցուն : Նրա մահից յետոյ այս գործը շարունակում են իր ժառանգները՝ որդին Յովհաննէս Դպիկը եւ թոռները՝ Յակոբն ու Կարապետը . «Եւ այդ, — գրում է Յովհաննէս Դպիկը, 1755 թուականին Պոլսում տպագրուած, «Մատեան»ի Յիշատակարանում, — մարդեմ յիշել ընդ պատճառի տըաբել տուողաց գրքոյս . . . եւ վհանդուցեալ հայրն իմ զԱստուածատուր յոդճաշխատ ծառայն ձեր, որ ի կենդանութեան պատուէր տուեալ իմուսեն յետնուպթեան թէ՝ ջանարջիր միւսանդամ տակել զսուրբ գիրքն Նարեկ՝ զգուշանալով յամենայն պարագայ նորին . . . : Յիշեսջեք ընդ նմին եւ զիս՝ զանիմաստ որդի նորին լոկ անուածք կոչեցեալ Յօհաննէս Դպիկը գծերն պաշտօնեայ ի մանկութենէ զտպագրօղ գրքոյս, որ ծառայեալ եւ ծառայելոց եմ՝ որքան եւ իւշեմ : Յիշեսցի ընդ մեղ եւ թոռն նորին համբակահասար որդի իմ

11. ՏԵ՛Ս Մ. Մաշտոցի անուան Մատեանակարանի գրակարանի թիւ 580 հնատիպ գրքի ձեռագիր յիշատակարանը :

Կարապետն, աւելածու՝ ընդ եղբօր իւրուամ Յակօքայ դեռաբուափկի, որ զաշխատանս դժուարինս յանձն առեալ երկայն աւուրբք եւ բաղմաւ զգուշութեամբ՝ առ ի աէր եւ ի պատիւ սրբոյ վարդապետին՝ զպատկեր նորին, որ յսկզբան փորագրեաց, հանդերձ կանոնական եւ փառագրական յօրինուածովք, զոր վաճառեալ մատուցաք ի ծառայութիւն աղջիդ առանց գնոյ (որպէս եւ հայր մեր՝ ծառայա ձեր, թէ եւ այս անհանոյ ոմանց թուփցի)»¹²: Այս պատկերով է բացւում 1755 թ. Պոլսում տպագրուած «Նարեկ» եւ այլ ուրիշները՝ դրանից առաջ եւ յետոյ:

Սակայն «Մատեան ողբերգութեան» երկի 18րդ դարի տպագիր եւ ձեռագիր օրինակների մէջ առանձնանում է Պոլսի 1726 թ. հրատարակութիւնը: Այդ հրատարակութեան նախաձեռնողներն են եղել՝ Բաղչէի Հոչակաւոր դպրոցուամ մատենագիտական քարձո կրթութիւն ստացած հայկաբաններ՝ Պոլսի ալատորիաբք Ցովհաննէս Բաղչէցին (Կոլտո) եւ Երուսարէմի պատորիաբք՝ Գրիգոր Շիրվանցին (Շղթայակիր): Պարտասար Դափիրն, ահա, այս նշանաւոր մատենագիտների եւ այլ միաբանների ու աշակերտների մասնակցութեամբ, իրականացնուած է Նարեկացու «Մատեան»ի եւ այլ երկերի վերոյիշեալ տպագրութիւնը: Այս տպագրութիւնը նախորդի համեմատութեամբ ներկայացւուած է մի նոր ձեւի մէջ: Հրատարակիչներին մտահոգուած է «Մատեան»ի բնագիրը ներկայացնել՝ «Ասուուածաշնչի» բաղդատութեամբ, զուսանցքուած նշելով այն նիւթերն ու նրանց էջերը, որոնք որ օպտագործուել են Նարեկացու կողմից: Սա ինքնին յոյժ դժուարին եւ օգտակար բնագրագիտական աշխատանք է, որ սկսում են նրանք եւ աւելաբուած 1726 թ. Դիկտամբերին. «Ուսահ որովհետեւ ըստ վկայութեան քաղմաց սրբազնից գրոց հաւասոի է ասացեալս՝ կամ եղել մեղ նուաստ եւ անպիտան ծառայից Տեառն եւ սրբոց տընօրինակնաց տեղեաց նորին եւ Ամլորդուոյ կարապետին յիւրոյ աղբոյ յետնեալ սաբասաւորացս, այսինքն՝ Գրիգորի եակիսկոպոսի եւ սրբոյն Սաղիմայ վերագիտողի՝ Ցոհաննու վարդապետին եւ դիտողի կոստանդնոպոլոսոյ, տպել եւ ի լոյս ածել զբեկեցկայաբար շարս աղօթից եւ արտասուաթեր բանից առն Աստուծոյ արբոյն Գրիգորի Նարեկացւոյ, երիցս երանեալ սրբագան եւ աստուածաբան վարդապետի եւ ճպնասոէր կրօնաւորի»¹³:

1726 թ. «Գիրք աղօթից» երկի Պոլսի այս տպագրութեան մասնակիցները միաժամանակ երկու նպատակ են հետապնդուած. առաջինը՝ բաւարարելու նարեկասէր ընթերցողին, քանզի նախորդ տպա-

12. Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Պոլս, 1755, էջ 572-574:

13. Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ..., Պոլս, 1726, էջ Բ (2):

դրութեան վերջին օրինակները սպառուած էին. «Գոյք թէպէտ սուրբ Մատեանն այս աղօթից սպանալ ի միջի մերուամ, առակայն վասն յոյժ պատռականութեանն՝ ոչ էր մնացեալ թէ ոք գտանիցէր զնա»¹⁴: Երկրորդ, ինչպէս նկատեցինք, «Մատեանը» բաղդատել «Աստուածաշնչի» հետո. «Հուակ յետոյ, քան դամենեախն, - գրում է Պաղտասար Դակիրը այդ սպագրութեան իր Յիշատակարանում, - եւ զիս սրբագրոյ սրբոյ Մատենիս, դմեղապարտ Պաղտասար չնչին Դպիրս, եւ զանձանձիր վարժապեսոն իմ գֆաշարապատցի Ազաւնի Աստուածատուր վարդապետն եւ ծնօտս մեր յիշեանիք ի Տէր, յորմէ եւ դուք անմոռաց լիշիք ողորմութեամբն. ամէն»¹⁵: Այս հրատարակութեան Յառաջաբանի եւ Յիշատակարանի հանդամանալից ուսումնասիրութիւնը համոզում է, որ Պաղտասար Դակիրը այստեղ էլ կիրառում է 1719 թ. Պոլսում «Մաշտոցի սպագրութեան սկզբունքները եւ օգտուելով սրբագրչի անսահմանափակ իրաւունքներից, ընդլայնում է իր բնագրագիտական, բանահրական աշխատանքի չափերը. «Կարողութեամբն Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին, - կարողում ենք Յիշատակարանում, - սպանցաւ սուրբ գիրքս աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ եւ ճնանազգաց վարդապետի, ի բազում լաւ օրինակաց, բազմաշխատ երկամբք սրբագրութեան, զայլ եւ այլ օրինակն ընդ միմեանս համեմատելով, որ եւ ի խնամոցն Աստուծոյ գտաք հին օրինակ մի որ գեր ի վերոյ էր քան զայլսն, յորմէ բազում ինչ սխալանս եւ ապակառութիւնս բառից եւ բանից ուղղեցաք չնորհիւն Աստուծոյ...»¹⁶:

«Մատեան»ի լուսանցքաբյին նշուաները իրականացւում է Միաբանութեան աշակերտոների ջանքերով՝ սիրացու Յարութիւնի, «որ էր հմուտ աստուածաշունչ տառից» եւ «քաղում երկունս կրեաց ի ժողովելն ովլայացմիւնս..., ընդ նմին եւ գիրքրիկ Աւետիք եղբայր նորին, զհուքծին որդեակն մեր ի Տէր հանգուցեալ, որ եւ նա ի տղայական հասակին ընթեռնոյն Աստուածաշունչ տառա, եւ մինչ գտանէր զրասու ոմանս համեմատս բառից աղօթական գրքոյա այսորիկ՝ ատէր խնդարով, ահա՛ վկայութիւն մի այլ դասի. իսկ մեք վասն շահելոյն զբողբոշ միտոնորա, ոչ ճռէաք յետս թէ այդ չէ պիտոյ»: Աղրիւների զուանցքային նշուաները, բնականաբար, կատարում էին Յովիկ. Բաղդէցու, Գրիգոր Շիրվանցու հակողութեամբ, իսկ նարեկացիագէտ, հայերէնապէտ Պաղտասար Դակիրը սրբագրում էր՝ բարիս լայն ու խորն իմաստով:

14. Անդ, էջ Բ (2):

15. Անդ, էջ Ակ (431):

16. Անդ, էջ նիւ (427):

Նարեկացու «Գիրք աղօթից»ի Պոլսի 1726 թ. տպագրութեան վերոյիշեալ գործի չնեղը, ահա, մեզ յայտնուամ են նաեւ, որ «Մատեան»ը, «Աստուածաշնչի» հետ բաղդատելու առաջին պատիւը պատկանում է Ուկան Երեւանցուն։ Դա նրա քանատիրական մտարդացուաների արդասիքն է, նրա գրչի առաջին փորձը. «... զի գընաբանս ոմանս յոյժ հարկաւորս, որք միջեցեալը են փ սուրբ Մատենիս, - կարողում ենք Պոլսի 1726 թ. տպագրութեան նախաբանում, - զտեալ զորքանս դիցէ հանդէպ իւրաքանչիւր տողիցն համարովն հանդերձ ի լուսանցուն, որպէս զուսաւորեալ հոգի Ռական միարդապետն ակեալ էր ու չէր կատարեալ յինչ եւ իցի մաստճառէ»¹⁷։ Հայագիտութեան մէջ միաբար ջօշափուող այն հարցը, թէ Նարեկացին ինչպէս եւ կամ որքանով է օգտուում «Աստուածաշնչից», 250 տարի առաջ սոսութապէս մրատամիանում են հայագիտական մտքից վերոյիշեալ մշակները (ըստ երեւոյթին նարեկացիացէտներին յայտնի չէ եղել այս կարեւոր փաստը)։ Ուշաբար է նաեւ, որ «Նախերդաբար առ ջերմեռանդ ընթերցօղ» կողագիրը կրող առաջարանը աւարտուած է Պաղտասար Դպրի «Աղերս առ սուրբ Հոգիս Աստուած» խորագրով քանաստեղծութեամբ։ Ազդային քնարերգակը աղերսում է երկնային թագաւորի օգնութիւնը՝ «Հառաջանքների մատեան»ի տպագրութիւնը յաջորդ աւարտին հասցնելու համար։

«Առ անփոփիս աստուածութիւն,
Հոգւոյդ ուրբոյ հըգօրի,
Աղերս անկեալ աղաղակեմք
Եւ անկանիմք առաջի։

Ցողեա՛ փ քոյ շնորհաց ցողոյդ,
Ի մեր հոգիս մերլսարի,
Տալով մեզ յոյս ներըսկըզբան,
Այսմ երջանիկ մատենի։

Զի կարասցուք առ հասանիլ
Յաւարտ սորին բերկրալի,
Յօդուտ համուրց մերազնէից,
Մանկանց սորբոյ Միօնի։

17. Անդ, էջ 9 (3): Որքան յատնի է Ուկան Երեւանցու տպագրած «Մատեան»ի առանձին օրինակներ պահպանուում են միայն Վենետիկի Միկիթարեան Միքարենութեան գրադարանում։ Այսուղին է պահպանուում նաև «Մատեան»ի 1726 թ. տպագրութեան համար հիմք գործած ձեռագիրը՝ թիւ 896։ Զեռագրում Պաղտասար Դպրիի բանաստեղծութեան տեղը ազտ է։

**Որ է Մատեան հառաջանաց
Նարեկացւոյն Գրիգորի,
Աստուածաբան վարդապետի,
Եւ ճշնասէր Հըսկողի»¹⁸:**

Այսպէս ուրիշն 18րդ դարում, երբ աւելի քան տասը անգամ տը-պագրուամ է Նարեկացու «Մատեան»ը, Պոլիսի 1726 թ. տպագրութիւնը՝ Պաղտասար Դալրի սրբագրութեամի, առանձնանում է իրեւ «Աստուածաշնչի» հետ քաղցածութեան ենթարկուած առաջին ամբողջական օրինակ: Նարեկացու «Մատեան»ի այս հարաբարակութիւնը արջի առաջ են ունեցել եւ օգտուել 1755, 1763, 1790 եւ այլ թուականների տպագրութեան հեղինակները: Այսպէս, օրինակ, 1755 թ. Պոլսի տպագրութեան «ծանուցում վկայութեանց» խորագրի տակ նշանաւոր հրատարակիչ Աստուածատուր կոստանդնապոլսիցու որդի՝ Յովհաննէս Դալրը գրում է, որ զանազան պատճառներով՝ կրծատումներով է ներկայացւում նախորդ հրատարակութեան լուսանցքային վկայութիւնները: «Նախ զի ոմանց ասացուածոց քանից՝ որք էին անմիջապէս ի նոյնոյ լինարանէն, թարց անկանելոյ է մէջն այլ բնարան, համարովթիւն միայն եղաւ, ո՞չ կըկնելոյ զնոյն...: Եւ ոմանց, ուր միջոցն հեռագոյն էր, կամ անդրանցեալ ի միւս տուփն եղաւ...: Ոմանց տեղեաց վկայութիւնքն երեւին ո՞չ պոլ համաճայն պատասխանուղքն նկարագրին...: Զի ուր միում բանի երկու եւ երեք վկայութիւնք պոյին՝ մինն եղեալ ի յերկուցն զանց արարաւ...: Զբագմաց ևս ոչ արարաք պոյիթ՝ սակա չքաւելոյ տեղւոյն ի լուսանցմն...»¹⁹:

18. Անդ, էջ Գ (3): Պաղտասար Դուրի Նարեկացիադիտութեան հետ կապուած մի ուշադրու փաստն հետ ծանօթացնե նաեւ վերջերս՝ գրականադէտ Մերի Սարեանի «Պատկանեններ» օժանական գրքի միջոցով: Յովհաննէս քահանայ Մկրտեանը «Ակեւելքում» (1839 թ. 3 Մայիսի) տպագրած «Ակեւելքանութիւն Պատկանեան տոռէմի» իր յօդուածում գրում է: «Այս Պաղտասար պատուելին իլիմի Խրան անուանեալ խարէական գործին հետեւելու համար՝ երկար ժամանակ թիարանի մէջ տանւում է. Պուրի պատրիարք Յակոպ Նաշեանի միջամտութեամբ նա աղատուամ է թիարանից. ի նշանաւորումն այդ աղատութեան՝ նա գրում է Աստուածածինն նույիրուած մի բանաստեղծութիւն՝ զՔաղելով ի բանից Նարեկացոյն»: Մ. Մկրեանը ներկայացնուած է այդ բանաստեղծութեան հետեւեալ տողերը:

«Ի հողային նիւթոյս ոսկի մաքրական,
ի ծովային բերսանց ակն արփիական,
ի յեղձական սեռէս՝ քրորէ մարմնական,
իսկունքի Մարփամ, տո՞ւր մեզ բան եւ ջան»:

Սա Պաղտասար Դուրի Նարեկացու նույիրուած երկրորդ բանաստեղծութիւնն է: Բանաստեղծի կը պիրի ցանկում յիւլում է այս երգի սկզբնատողը, թարց այն ամբողջութեամբ մեզ յայտնի չէ:

19. Դիրք աղօրից..., Պոլս 1755 թ., էջ 575:

«Մատեան»ի վերոյիշեալ հրատարակութիւմները արդի բանասէր ներին հնարաւորութիւն են ընձեռնում. նարեկացու կողմէց, «Աստուածաշնչեց» օգտուած իրաքանչիւր նիւթի մասին որոշակի դադափար կազմելու եւ կամ թէ՝ իրենց վերաբերմունքը, կարծիքը ունենալու այդ առթիւ:

* * *

18րդ դարում նարեկացու երկերի ձեռագիրը եւ տպագիրը օրինակ-ների հասարակացման այս ընթացքի մէջ զարգանում է նաև նարեկագիրդիտութիւնը: Ժողովրդի մէջ դարերով մտած, ժողովրդից սիրուած ու պաշտուած «Մատեան ողբերգութեան» երկը ստանում է գիտական նոր ճանաչում: Նարեկացիազիտական մի իրատեսակ շարժում է սկիզբ առնում եւ այդ շարժման կենտրոններն են դառնում՝ Վենետիկը, Պոդիսը, Ֆջմիածինը եւ այլուր:

Դարի կրթական, լրացաւորական շարժման նշանաւոր գործիչներ՝ Միխիթար Սեբաստոսացին, Գրիգոր Շիրվանցին, Յովհաննէս Բաղրչեցին, Կոմիտաս Քէօմուրճեանը, Յակոպ Նալեանը, Պալտասար Դպիրը, Պատրոս Նախիջեւանցին, Խոդնիկոս Զուլայեցին, Յովհաննէս Կարնեցին, Յարութիւն Կարնեցին եւ այլք, իրաքանչիւրը իւրովի ներկայացնում են նարեկացու «Մատեան»ը, նրա անձն ու վաստակը: Նրանք հաւատաւորի եռանդով շարունակում ու զարգացնում են նարեկացու դրական ժառանալութեամբ խանդավառուած միջադարի նշանաւոր գործիչներ՝ Վարդան Հայկանի, Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու, Քէորդ Սկեւուացու, Յովհաննէս Բանասէրի, Գրիգոր Խլաթեցու, Առաքել Սիհնեցու եւ այլոց ակսած գործը՝ Հայոց նոր եւ ընդհանուր վերանորոգուող գրական կեանքի բուռն պահանջներին համապատասխան:

18րդ դարի նարեկացիական շարժման ընդհանուր պատմութիւնը ամբողջանում է հետեւեալ հարցերի շրջագծում:

1.- Նարեկացին ձեռագրերի աշխարհում եւ տպագրութեան պատմութեան մէջ (որին մասամբ անդրադանք):

2.- Նարեկացու մուտքը դարի ճարտասանական, քերականական դասագրքերում, պատմագիտական աշխատութիւններում եւ «Հայկագեան բառարանում» (Մխիթար Սեբաստոսու, Ստեփանոս Աղոնցի, Միքայէլ Զամչեանի, Գարբիէլ Աւետիքեանի եւ այլոց աշխատասիրութեամբ):

3.- «Մատեան ողբերգութեան» արուեստի եւ վիլիսովիայութեան ցոլքերը դարի ողբի եւ տթափման քանաստեղծութեան մէջ:

- 4.- Նարեկացուն նույիրուած նորատիսկ երգեր ու դրոյցներ :
- 5.- Երկրորդ [Մատեան ողբերգովթեան] երկը Պետրոս Նախիջեւանցու հեղինակովթեամբ :
- 6.- Պատլուասար Դալրի քնարերգովթեան Նարեկացիական լարը :
- 7.- Յակոբ Նալեան Նարեկացիադէտը :

Սոյն հաղորդման մէջ մենք անդրագառնուած ենք միայն Պաղտասար Դալրի քնարերգովթեան վրայ՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգովթեան» երկի թողած ազդեցութեան հարցին :

* * *

Հռչակաւոր մատենագիտ, քերականագիտ, ատոռուածաբան, փիլիսոփայ, մանկավարժ Պաղտասար Դալրի քնարական ստեղծագործութիւնը հանդամանօրէն ուսումնասիրուել ու գնահատուել է : Այստեղ, մեր ուշադրութիւնն են գրասելու նրա, յաստկապէս այն երգերը, որոնք գուրգու են մնացել հեղինակի «Տաղիկներ սիրոյ եւ կարուտանաց» դրբե պիտական հրատարակութիւնից²⁰, եւ որոնք, իրաւու 18րդ դարի վերանորոգուող կզօնագրային բանաստեղծութեան բնորոշ օրինակները, իրենց վրայ կրում են «Մատեան ողբերգովթեան» ազդեցութիւնը :

Մարդու կատարելութեան, ներդաշնակովթեան խնդիրը, որ ինչ-պէս յայտնի է, հայոց վիճիխոփայովթեան մէջ զիտականօրէն հիմնաւորում ու զարգացնուած է Դաւիթ Անյաղթը՝ «Դիմք տահմանաց»ում, եւ իր «Մատեան ողբերգովթեան» երկի գաղափարախօսութիւնաց՝ առանցքն է դարձնում Գրիգոր Նարեկացին, Պաղտասար Դալրը վերարծարծուած է իւրովիլ. «Եւ արդ, որովհետեւ ի հոգւոյ խմանալուց եւ ի մարմնոյ զգալուոյ է բարեկացեալ մարդս, յետ քանի մի հոգեւորացն երդեկեաց՝ եղաք սակաւ ինչ եւ ի մարմնականացն զուարծացուցչաց, որք ի պատեհ պահու՝ ո՛չ են խոտելիք»²¹, - զգում է Պաղտասար Դալրը, ներկայացնելով քնութեան եւ ուրախութեան մի շարք երգեր: «Տանիք ասու, ո՛վ ընթերցող, - զգում է բանաստեղծը իր նոյն Տաղարանի վերափոխուած մի այլ հրատարակութեան Յիշատակարանում, - զի՞ քանի մի ինչ յետին աղեալ երգեցմ ունքս մինչ ցաստ, թէ-

20. ՊԱԼՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղիկներ սիրոյ եւ կարուտանաց, աշխատակրութեամբ Շուշանիկ Նազարեանի եւ Ասատուր Մաշտականեանի, Երևան, 1958:

21. ՊԱԼՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղարան փոքրիկ, Պոլս, 1768, էջ 107: Մեր ձեռքի տակ է Մատեանագարանի հաստիպ գրքի Ա855 թուահամարի տակ գտնուող Պ. Դպրի տաղարանների միացեալ ժողովածուն, որը մասամբ պակասաւոր է:

պէտ ըստ արդուաքին կերպարանին ցուցանին երգեցմունք մարմնաւոր ուրախութեան, ասկայն ըստ ներքին զօրութեան համայնքն առ հոգեւորն վերաբերին²²:

Յիրամի, Պարտասար Դաղրի բոլոր լաւաղոյն երգերում, «Ներքին զօրութեամբ» իշխում է հոգու, մտքի, բանականութեան ձայնը: Նոյն իսկ նրա քնչաղին աիրոյ երգերում առկայ է արդ դիմքը: Ժողովը դաշտավաշշուղական արած սիրոյ երգերին ներգակ, Պարտասար Դաղրի սիրոյ քնարը զուսպ է, նուրբ ու չոփաւոր, բաց, կրքոտ, մարմնական սիրոյ նկարագրութիւններից գերծ, ջերմ գլացմունքալից, բայց եւ հոգերէն, հոգեշահ, յրջախուհ: Բատ բանաստերի իմացական եւ ըղդացական յատկութիւնների՝ ներդաշնակութիւնը պէտք է իշխի մարդկային ամէն տեսակ փոխարաբերութիւնների մէջ, հոգու, մտքի բանականութեան ձայնի թելադրանքով: Տեսական, իմացարանական այս ըմբռնումն է իշխում Պարտասար Դաղրի աշխարհային եւ կրօնական բոլոր լաւաղոյն երգերում: Նրա սիրոյ տաղերը գեղադիտօրէն հաստատում են այդպիսի ներդաշնակութեան կարեւոր դերը մարդու՝ նաեւ ընտանեկան անհարական երջանկութեան հարցում: Գեղադիտական նոյն ակդրունքն է իշխում Պարտասար Դաղրի նաեւ այն բանաստեղծութիւններում, որոնք բացայացուում են հասարակական, տնտեսական յարաբերութիւնների խոցելի կողմերը՝ սուսուր, կեղծիքը, ընչափաղցութիւնը, կամբայականութիւնը եւ այլն: Իր բանաստեղծական ամբողջական նկարագրով՝ Պարտասար Դաղրի ներկայանում է հայոց վերանորոգաւոտ կամ անցման շրջանի դասական բանաստեղծութեամ մի նոր դպրոցի հիմնադիրը 18րդ դարում, մարդու կատարելութեան, իմենափոխութեան վերաբերեալ Դաւիթ Անյաղը ի եւ Գրիգոր Նարեկացու բարոյագիտական, իմացարանական, հայեացքների իւրովի կրողը, գարգացնողը՝ նոր ժամանակների բանաստեղծութեամ մէջ: Երգչի՝ «Ի քեզ զիմեալ աղադակեմ», «Ի մէջ երկոքին ներհակեալ անկեալ», «Այս հայրն երկնաւոր՝ զղական ձայնիւ», «Պատահումն բնուպթեան», «Լալով երգեմ երգ հառաջման», «Եկի երկիրն այս ախոսալի», «Ո կենաց նախկին վայելմանց», «Առ անփոփիս աստուածութիւն», «Որք քնարիստ բանիւ գէակիս ենթագրեցին», «Սիրով անցաւորիս երկրաքարչեցայ», «Ի սկզբանէ հոգւոյս սոսին աղտեղի», «Ի ցանկալի անցաւորիս մի՞ խարիբ», «Խժը եղենային», «Ի մէջ մեղաց կամառ անկեալ», «Ո միտ քերեալ զիմ արարմումս», «Թերի, եղկելի, եղկելի», «Ո ողացին նիւթոյ տակի մաքրական», եւ այլ երգեր՝ իրենց վրայ կրում են նարեկացու քարոյափիլիսոփայական հայեացքների կնիքը:

«Բայց եկեացուք եւ երկրորդ ամհմանն եւ հաւաստեսցուք, որ

22. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղիկմեր սիրոյ եւ կարօսամաց, Պուհս, 1768, էջ 116:

ասէ, թէ իմաստուասիրութիւնն է պիտութիւնն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց», գրում է Դաւիթ Անյաղթը եւ քացայացում վիլիխուայրութիւնն վերաբերմունքը այդ իրողութիւնների նկատմամբ. «Քանզի, — շարունակում է նա, — միայն իմաստուասիրութիւնն է, որ յաղագս աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց եղանիք: Եւ ոչ յասուածայինսն արհամարիկ՝ լինելովն անվաս մարդկայնացն, այլ աստուածայնոցն իեւնեփի եւ աշակերտի, իսկ գմարդկայինսն յարդարէ եւ ի կատարումն ածէ»²³: Ուրեմն, ըստ Դաւիթ Անյաղթի, իմաստուասիրութիւնն աստուածայինն եւ մարդկային իրողութիւնների գիտութիւնն է, որը առվորում է աստուածայնից, հետեւում, աշակերտում է աստուածայնին, իսկ մարդկայինն իրողութիւնները, գործերը կառավարում, կարգաւորում է: Աստուածայինն եւ մարդկայինն իրողութիւնների վերաբերեալ անյաղթեան այս հայեացքն է իշխում Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոչմում՝ ծայրից ծայր... Նարեկացու ստեղծառուրծական միտքը, աշխարհը բանումները ըլնունդ են առանուած իմացարսնական այս ակունքներից եւ կուռ գըրսեւորամ աստանում քրիստոնէական հաւատքի դրշով: Յէրաւիք, նաւրեկացին է միջնադարի այն հանճարեղ քնարերգակն, որ իր հոյակերտ երկի անմիջական առարկան, նիւթը, բովանդակութիւնը գարձնուած է աստուածայինն եւ մարդկայինն իրողութիւնները՝ երկուատեք հաւատագարօր ու հավագրութիւնների անհակնելի միւրթեամ մէջ՝ մարդու կատարելութեամ նշանաբանով: Հանճարեղ բանաստեղծը իեւնեղականօրէն կենսագործում է աստուածայինն իրողութիւններով առաջնորդութեալ, նրանց աշակերտներու եւ դրանց միջոցով մարդկայինն իրողութիւնները կարգաւորելու, շտկելու, ամեյալքեամ փիլիսոփայութեան խորին խորիութեալ...: Դա՝ «Մատեան»ի գաղափարախօսութեան եւ արուեստի հարցերի հարցն է, Նարեկացու ստեղծագործական մեթոդութիւնը կիպակէտը, նրա գրական միտուամը: Փի խորոց սրտի» կատարու հետ ունեցած իր անմիջնորդ խօսքի, զրոյցի միջոցով, նաւրեկացին բացում է երկնքի եւ երկլիքի բոլոր փակ գռներն ու վարդոյրները, ներթափանցուած նրանց բոլոր ծագերը, փորչերը, զննուած նրանց երեւոյթներն՝ սրանձնին-առանձին, բացայսուում նրանց տարբերիչ գծերը, նրանց միջներ եղած եղած առաջարկացնուած մարդու հաւաքական կերպարը քանական շնչաւոր գորին՝ նրա հոգու ողջ գրգացողութեամբ ու պատկերով: Դէմ դիմաց, աստուածայինն եւ մարդկայինն իրողութիւնների բայն դաշտի վրայ, Նարեկացին տեսանելի է վարժնուամ նրանց միջնեւ բացուած

23. ԴԱԼԻԹ ԱՆՑԱՂԹ, Երկասիրութիւմիք վիլիխոսփայականք, համահաւաք քննական բնագրերը եւ առաջարանը Ս.Վ. Արեւածանեանի, Երեւան, 1980, էջ 59, (բոլոր ընդգծուածները մերն են - Շ. Ն.):

ահռերի վլհը, անդունդը եւ հետապնդում այն վերացնելու, երկնեմի եւ երկրի միջեւ ներդաշնակութիւն, միութիւն ստեղծելու նպատակը . . . : Հենց այստեղ, այս հարցում միանում, խաչաձեռում են սուրբ հայրերի եւ հին ու նոր գիտական ճշմարիտ փիլիսոփայութեան ու «Մատեան ողբերգութեան» երկի բարոյագիտական սկզբունքները : Աստուածային եւ մարդկային իրազութիւնների վերաբերեալ բարյալիան աստուածաբանութեան, գիտական փիլիսոփայութեան եւ նարեկացու միասնացած այս հայեացքին, ահա, ներքափանցում է նոր ժամանակները եւ խորն ազգիցութիւն քողնում հայոց վերանորոգուող, կամ անցման շրջանակի գրական ստեղծագործական մտքի եւ յատկապիսով ողբի ու սրբափման բանաստեղծութեան վրայ . . . :

Դարի նշանաւոր բանաստեղծ-գործիչներ՝ Մխիթար Սեբաստացու, Պաղտասար Դաղրի, Ցակոր Նալեկանի, Գետրոս Նարիջեւանցու, Ղետրոս Ղափանցու եւ աշլոց երգերում ներկայացւում են աստուածային եւ մարդկային իրողութիւնները՝ տարբեր ոլորտներում, զարդացման տարբեր ընթացքի, արտայարչական տարբեր ձեւերի ու եղանակների մէջ : Պաղտասար Դաղրի վերոյիշեալ բանաստեղծութիւնների եւ հարիւթից անցնող քնարական երգերի ընդհանուր նիւթը, բովանդակութիւնը վերաբարձրում, շօշափում են այս իրողութիւնները : Երգչի խորհափառատական, կենսափիլիսոփայական, կրօնական, կրօնապազային քանաստեղծութիւններում՝ նոյն երկինքն, ու երկիրը, նոյն արգերն ու մարգարէնները, Մարիամը, Քրիստոսը եւ նոյն ինքը՝ ամենակարող Վասուած . . . եւ իբրև հակաբրութիւն այդ բոլորի՝ ժամանակակից երկրային հակամարտութիւններով լի կենամք եւ նրա կենտրոնում՝ մարդը՝ 18րդ դարի բանական գոյը, իր ողբերգութեամբ, իր հոգու անհուն տառապանելով .

«Մժբահարեալ քարամբք խբդիւ
կոշկոճիմ գերիս, կոշկոճիմ,
եւ յիշելով ըզչարսն իմ, մորմոքիմ,
Ո՛չ մորմոքիմ . . . »²⁴

Խոստովանում է երգիչը «Առ գասողութիւմ խոճիս» բանաստեղծութեան մէջ :

«Ո՛չ քեզ նըման ամենազութ եւ ողորմած, գտանի, Տէր իմ,
Ո՛չ ինձ նըման յոյժ մեղաւոր եւ գըլորած գտանի, Տէր իմ,
Թէպէտ ամենեքեան են կարօտք ողորմութեան քում, Տէր իմ,
Բայց ինձ նըման ողորմելի ո՛չ ոք տաեղծուած գտանի, Տէր իմ»²⁵ :

24. ՊԱՂԱԾԱՍՏԻ ԴՊԻՐ, Տաղարամ, Պուլու, մ768, էջ 50-51:

25. ՊԱՂԱԾԱՍՏԻ ԴՊԻՐ, Տաղարամիկ սիրոյ եւ կարօտամաց, էջ 62:

Երգիչը իր անձի, իր եսի մէջ տեսնում է մարդկային բոլոր թու-
լութիւններն ու արատները, իր մէջ է տեսնում չարիքի բուն պատ-
ճառը. ըստ նրա՝ քանական արարածների մէջ չկայ ոչ ոք այնքան
մեղաւոր, այնքան գլորած, այնքան մոլորուած, որքան որ ինքը:
Պաղտասար Դպրի քնարի ընդհանրացուած այս լարը սնունդ է ստա-
նում Նարեկացու «Մատեան»ից.

Ո՞չ ոք մեղաւոր իբրեւ զիս,
Ո՞չ ոք անօրէն,
Ո՞չ ոք ամբարիչոտ, ո՞չ ոք անիրաւ,
Ո՞չ ոք չարագործ, ո՞չ ոք վրիաբեալ,
Ո՞չ ոք ախալեալ, ո՞չ ոք մոլեգնեալ,
Ո՞չ ոք խարդախեալ, ո՞չ ոք չարախեալ,
Ո՞չ ոք ամաջեցեալ, ո՞չ ոք դատապարտեալ.
Ես միայն եմ եւ այլ ո՞չ ոք,
Ես եմ համայն եւ յիս ամենեցուն»²⁶:

Նարեկացին ընդհանրացնող հզօր խօսքով՝ երեւովթականացնում
է բոլոր մարդկանց խմացական եւ զգացական յատկութիւնները, պատ-
մում, ողբում է ամէնքի վիշտն ու ցաւը. «Ես եմ համայն եւ ամէն-
քին է պարփակւում իմ մէջ» գաղափարն է նաև մարմնաւորում՝ ան-
կըրկնելի արուեստով.

«Եւ քանոի առ ամենայն հասակ անկեալ յերկրի ազդ բանականաց՝
այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուազի,
որ զամենեցունց ունի զկրից պատահմանց նշաւակեալ յիւրում
պատկերի...»²⁷:

* * *

«Վասն զի, որպէս ասէ Պղատոն, – զրում է Դ. Անյաղթը, – թէ
իմաստասէր կոչեմ ես ո՞չ զայն, որ շատն գիտէ, եւ ո՞չ որ բազում ինչ
ի միտ առնուկ կարող է, այլ որ անքիծ, անարատ կենցաղավարու-
թիւն կատարած ունի յիմենան. Քանոի կատարեալ կմաստասէր է ո՞չ
որ բազում ինչ գիտէ, այլ որ գալխաս կարող գոյ հնագանեցուցա-
նել»²⁸: «Եւ պարտ է գիտէ, – զրում է դարձեալ Դ. Անյաղթը, – թէ
վասն այսորիկ է իմաստասիրութիւն՝ վասն զարդարելոյ եւ պանու-

26. Գրիգորի Նարեկայ վամից Վամականի, Ոգերգութիւն, Վեճեաիկ, Ս. Ղազար, 1844, էջ 411 (ՀԲ):

27. Անդ, էջ 21 (Դ.Ա.):

28. Դևիթի Անթալթ, Երևան. փիլիսոփայականք, էջ 99:

նելոյ գմարդկացին հոգիս, եւ փոփոխելոյ զնա ի նիւքային եւ ի մառախղուտ կենցագոյս յաստուածայինն եւ յաննիւքն»²⁹:

Նարեկացին է 10րդ դարի այն «անճարեղ քնարերգակը, որ գիտական վիլխոսովայութեան հին ու նոր դարերի պատմութեան, բարյական աստուածաբանութեան, քրիստոնէական ուսմունքի համախոհ էջնից բանաստեղծութիւն է վոլիսադրում մարդու անհատականութեան բարեփոխութեան վերաբերեալ այս ճշմարիտ գաղափարը եւս: Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոչմի կենտրոնում, ահա, կանգնած է «անդրաբոս» կենցաղախարութիւնից դուրէ, ընչափաղցութեան ախտին ենթարկուած «նիւթական եւ մարախլապատ» կեանքին (Դ. Անյաղթ) անձնատուր, «գետնաբեկ», «անասնակերպ», «ոոգեկորոյս և մարմնակարկան» (Նարեկացի) մարդը, եւ քանաստեղծը նրա ողբն է ողբում . . .: Աստուածային եւ մարդկային իրողութիւնների անեղոր գացոտի վրայ, «քննարդատանքի», «յանդիմանութեան», «եղբայրականքի», «Հերակլիսէսի եւ Դեմոկրիտէսի» «լացով եւ ծիծաղով» (Յակոբ Նարեան), իրական, առարկալայական աշխարհի խորն ճանաչողութեամբ, երկնային եւ երկրային երեւոյթների հակադրութիւնը վիմաստաւորող աներեւակայելի բանարուեստով Նարեկացին մարմնաւորում է ո՛չ միայն «կատարեալ փիլիսոփայի», այլ առհասարակ մարդու՝ գիտութեան, «իմաստութեան ընդունակի», «կամաւորապէս ընթաքարտցութեան ախտին ենթարկուած», բանական գոյի հաւաքական կերպարը.

Ահա, ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն եւ մարմնակործան, հոգեկորոյս եւ միշտ մտախար, կամակոր իսկ եւ արտաբեկ, ուշամուաց եւ հանճարապարաւ, գայազիրէ եւ իմաստապատառ, յարատարես եւ եղեռնալուր . . .

Զի եթէ ես ինձէն անձին իմում գիտեայ դաստախազ համբարձայ այլքաննեօք բանիւք, եւ ունիմ տակաւին զսուր բարկութեանս անխոնարհելի, ո՛վ ոք ի յերկրածնաց աստի զիս ողոքեսցէ . . .»³⁰:

Եթէ ես կամովին չեմ խոնարհում իմ բարկութեան սուրը, եթէ ես ինքս եմ կանգնած իմ դէմ, ինքս եմ իմ ներքին թշնամին, ապա ո՞վ, այլեւս երկրայիններից կարող է փրկել, ամոքել փինձ, փակել իմ առջեւ բացուած կործանման վիճը, ողբալ փինձ, - բողոքում է Նարեկացին: Սա յիրաւի վերածներից գրականութեան գաղափարա-

29. Ամոր, էջ 104 (ՀԲ):

30. Գրիգորի Նարեկայ վամից վամակամի Ողբերգութիմ, Վենետիկ, Ս. Ղազար, 1844, էջ 106-117 (այսուհետեւ կը նշուի միայն՝ Ողբերգութիմ):

խօսութեան բնորոշ տիճ է։ Նարեկացին մարդու ճակատագրի համար պատասխանատու է դարձնում իրեն՝ մարդուն։ Նա պէտք է տնօրինի իր վիճակը, իշխի փնտիրեն։ Մնայ իր «պատշաճ չափ ու սահմանում», նա պատ է աստուածային կամայականութիւններից (որին ենթակայ էր «եթանուական ժամանակների մարդը»)։ Մարդ մեծատակի գոյութեան նամաշչումը, նրան տուած ինքնիշխման, ինքնահաստատման իրասաւութիւնը նարեկացու փիլիասփայութեան, նրա գեղագիտական աշխարհալմբումնան առնենառաջադիմ գիծն է։ Մարդ բանականի ճակատագրի նկատմամբ նոյն մտահոգութիւնն ունի Պաղտասարը Դավիթը։ Վերեւում յիշաստակուած նրա քնարական երգերի հերոս, աւա, յար եւ նման է «անրիծ ու անաղարտ կենցաղավարութիւնից զուրկ» այն մարդուն, որն անկարող է սանծելու «զախտն իւր» եւ մի կորմ թողած «մտածելու, գիտութիւն ընդունելու աստուածային շնորհը» (Դ. Անյաղթ) դառնուած է իր անձի ներքին թշշնամին՝ «անձնամատն», «սրտարեկ», «ուշամուաց», «հանձարազրակրաւ», «դդայազիրկ» (Նարեկացի), եւ գուրս գալով մարդ-բանականի իր սահմանից հաւասարում է անբան անստուններին (Դ. Անյաղթ, Գ. Նարեկացի)։ 18րդ դարի քնարերգակը վերանորոգում, վերարծարծում է Նարեկացու «Մատեան ողբերգութեան», «ինքնադասանըրի», «քռնարդատանըրի», այս նուագը եւա։ Նա «լալով երգում» է իր «երգն ողբական» եւ կերպարանաւորում է իր դարի «մարմնական ցանկութիւններով մթաղնած» (Անյաղթ), իր ժամանակի, «հոգեկորոյս, եւ «մարմնակործան» (Նարեկացի), իր դարի «յանասնոց հանգուեցեալ», «ոգոյ բանական եւ իմ մարմնոյ զգակի» (Պաղտասարը Դավիթը) մարդուն, եւ նրա ողբըն է ողբում։

«Ի յերինս երէ մոլորեալ,
Ի կենաց ուղւոյն խոտորեալ,
Դարձո՛ զի՞ս ըգմոլորեցեալ.
Լալով աղերսեմ, աղերսեմ,
Աղերսեմ, աղերսեմ, ո՞ւ,
Առ բարի հովիւն աղերսեմ»³¹ :

«Լալով երգեմ, երգ հառաջման փմ նըմանեացն ի վերայ,
Որք անասնոց հանգուեցեալ անմըստանան յարուկայ,
Արտելանել ո՛չ ախորժեն ի տըմարդի գընացից,
Գերի զինքեանս կապեալ ունին թիւրաշապիղ ընթացից...
Իրեւ ըզմարդ գոն, երեւին, ըըլջաղային, բարբարին,
Բայց ի բարոսց քառոստանեաց ո՛չ քընաւ զանազանին»³² :

31. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղարամիկ պիրոյ նու կարօտանաց, էջ 60:

32. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղարամ փաքրիկ, էջ 37-38:

«Ես ինքն ինձէն կամաւորապէս անճնամատն եւ մարմնակործան», - ողբում է Նարեկացին, «Աղաղակիմ զմեղանս իմ դիտելով ինձնէ»... , «Իմձէն ինձ խորխորատ քացի»; - «Դրում է Պաղտասար Դպիրը».

«Գերի, եղկելի, ողբալի, ո՞հ, թիրաւի լալի եմ, բայի: Ծանրագոյն վըշտօք ցաւալի, ո՞հ, ե՛մ վիրաւորեալ, ե՛մ վիրաւորեալ, ո՞հ, վիրաւորեցեալ գերիս: Ինձէն ինձ խորխորատ քացի, ի դուռն մահու գընացի, Յամոր եւ անճար մընացի: Երգելով ինձ երգ ողբական, ո՞հ, Ողբացէ՛ք զանձն իմ պարուական, Հէնք չարին զինեւ պատեցան, ո՞հ, ե՛մ վիրաւորեալ, ե՛մ վիրաւորեալ, ո՞հ... Ի կենաց ուղբոյն թիրեցայ, ո՞հ, Իմ կամաց ի մահ վարեցայ, Մաստկապէս կոփահարեցայ, ո՞հ, Ե՛մ վիրաւորեալ, Ե՛մ վիրաւորեալ, ո՞հ...»³³:

Ժամանակակից գրաւոր ժողովրդաշունչ, կանոնական բանաստեղծ ծովթեան՝ հանդի, չափի, հիւսուածճի պարզ, դիւրին ձեւերի մէջ, ախորժալուր երաժշտականութեամբ, տարաստիճան՝ պարզ, միջին պարզութեան, երաբնն էլ լորթին գրաբարով, ողբի, աղերանքի, ապաշխարանքի, ողջման, հառաջանքների ուղեկցութեամբ՝ Պաղտասար Դպիրը կերպարանաւորում է իր ժամանակների մարդու բարդ, փոթորկայոյց հոգէաշխարհը, որ երգիչը բացորոշում նրա իմացական եւ գրայական, ճանաչողական եւ կենամանական յատկութիւնների աններդաշնակութիւնները, մատնացոյց անուան գլայականի, կինդանականի գերիշխանութեան դառն իրողութիւնը, դրա ցաւալի հետեւանքները, դրանց ծնող պատճառները, եւ ինչպէս Նարեկացին, յորդորում, աղբասում է մարդ քանականին՝ սթափուելու ինքնամոռացման «ախտաւոր» քնից, ձերբազատուելու մարախլապատ, նիւթական կենցաղավարութիւնից, սիրափոխուելու, սիրակերպուելու.

«Ի քոն մեղաց յամառեցեալ թիրեցար, անձն իմ գերի, թըմբեցար եւ ի բանապարկուէն պատրեցար, անձն իմ գերի, Պատրեցար, ներ սուստ կենցաղոյս յառօրէից փափկութեանց, Փափկութեանցն, որք, սընոտիք են ցանկացար, անձն իմ գերի...»³⁴:

33. Ամդ, էջ 28-28:

34. Ամդ, էջ 41-42:

Ահա եւ 18րդ դարի «Հոգեկորոյս եւ մարմնակործան» բանական դոյլ՝ «թշմրեցեալ», «թիւրաշաւիլ», «ղեկաչարդ», «անարի», «անուղի», «սուտ կենցաղու», «անոտի փափկութեանց», «մեղեքի մէջ «թաւալդլոր», «յամառեցեալ», «տարսամական» «չարասէր»...

«Ես ինձ արարի, արարի,
Դիպեալ զարարի, զարարի,
Զբարին թողեալ ես չարարի,
աւա՛ղ, աւա՛ղ...»³⁵:

Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի հերոսը յաճախ այն-արէս չի երեւում, ինչպէս է խրախնմանքի ժամանակ տխուր է, տըր-տում, դէմքով ժապում է, բայց մտքով խոցուած է, տեսքը ծիծաղ-կոտ է, բայց աշքը՝ լափ մէջ... Երկու ըմպանակ ունի իր ձեռքում՝ մէկը արինով, միւտը՝ կաթով...

«Ի հանդստեան իւրում վաստակեալ,
ի խրախնութեան վնքեան տրտմեցեալ,
դիմօք ժապեալ եւ մտօք խոցեալ,
կերպ ի ծաղր եւ աչք ի յորբուամն,
երեսք զափոփանս ձեւացուցանէ
եւ արտասուրքն զգառնութիւն արտին ճշմարտէ:
Ծմպանակը երկու յերկոսին ճեռին,
մինն արեամբ եւ միւտն կաթամբ,
երկու բուրանոցք կայծակնաւորք,
մինն վննկով եւ միւտն ճենճերիւ...»³⁶:

Ինքնազգացողութեան, հոգեվլիճակի նման հակառիր պատկեր-ներ ենք տեսնում նաև Պաղպատար Դալրի մօս, ներքին նոյն խռովքն ունի, նոյն տրամադրութեամբ է համակուած եւ նրա քնարական հերոսը:

«Ի միտ քերեալ զիս արարմունս
պարկառիմ, զերիս, պատկառիմ,
եւ հիանամ թէտ տակաւին
բարբառիմ, ո՞հ, բարբառիմ:
Ներսիրելեաց, թէպէտ դիմօք
ծիծաղիմ, գերիս, ծիծաղիմ,
Բայց ի ներքոսաս խոր հառաջմամբ,
նըւաղիմ, ո՞հ, նըւաղիմ:

35. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղարամիկ սիրոյ եւ կարօտանաց, էջ 44:
36. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Ողբերգութիւն, էջ 168-169 (Լ):

**Զաղմամբ մըտացա իբր երկաթով
հարկանիմ, գերիս, հարկանիմ,
Եւ ի տըկրանս անհընարիս
արկանիմ, ո՞հ, արկանիմ . . . »³⁷:**

Իրարամերժ, հակադիր իրավըռպէթիմների մէջ Պալուսասար Դպի-
րը ներկայացնում է բանական գոյի հոգեկան մեծ ողբերգութիւնը,
զդայական կրքերի, նիւթապաշտութեան, չարի դէմ մղած նրա չդի-
տակցուած, թոյլ, անզօր պայքարը . . .

**«Մինչ կամիցիմ ի վեճր հայիլ բանականս,
Եղծանելիս զիմացականս կոր առնէ,
Որում եղեալ աստանան ընկեր եւ աստար,
Փորեալ զինեւ զիսորիսորատը հոր առնէ . . .**

**Զորացոցեալ գհոգեկանս դամենայն,
Զախտին քերմունս փըշատարած մօր առնէ,
Ո՛չ տալով թոյլ բուսիլ կենաց պըտուղ մի,
Զմահացոցիչ պըտուղն միշտ նոր առնէ . . .
Զորացո՛, Տէր, զբոլոր արմատ չար ծառոյն,
Որ պիմ համայն հագույ պըտուղս չոր առնէ,
Եւ քըժշկեա՛ դիս ի բորից բորոտին,
Որոյ բորն ի յոգիս յարակ քոր առնէ»³⁸:**

Բարու եւ չարի մենամարմտի մէջ՝ չարն է ուժեղ . . . ողբում է
բանաստեղծը, եւ ինչպէս Նարեկացին ընդլիում է այդ դառն իրո-
ղութեան գէմ:

**«Մինչ ըզբարին խորհիմ, ընդ իս մաքառի,
Իբրու սաստիկ հուր բորբոքի եւ վառի,
Իսկ զիջանէ եւ բարկութիւն ըսպառի,
Ցորժամ անձն իմ զբարին թորեալ՝ վաս առնէ,
Եւ առաւել հանգչի յորժամ՝ չաս առնէ»³⁹:**

Զարի արմատները քնում չորացնելու անհուն բաղձանքով, Պաղ-
տասար Դպիրը, Նարեկացու բարոյադիտական յուսաշաղախ պոռթ-
կումնեղին արձագանքում է մի նոր շնչառու: Իր քնարական երգերի
ցանկը նաև Հարստացնում է Դ. Անյաղթի «Զարն ո՛չ անեղ» միկլ-
սովորյական բանաձեւի բանաստեղծական մեկնութեամբ, զարդացնե-

37. ՊԱՂԾԱՍՍՐ ԴՊԻՐ, Տաղարան ամխորագիր, 1788, էջ 49:

38. ՊԱՂԾԱՍՍՐ ԴՊԻՐ, Տաղարամիկ սիրոյ . . . էջ 80-82:

39. Ամդ, էջ 83:

լով այն միտքը, թէ չարն անստեղծ է, որ բնութեամբ ոչ ոք չար չի ծնուռամ, որ մարդկային յարաբերութիւնները, հաստարակական բարքերն են ծնունդ տալիս չարին եւ որ չարի դէմ պէտք է պայքարել գործով՝ լուսաւորութեամբ, պիտութեամբ, ինքնահանաշմամբ.

«Որք բընախօս զէակքա ենթագրեցին,
Ամենայն չար գոր ստանջելի ճշմարտեցին,
Ո՛չ ոք ստանջեալ անսապական սկըրաբերին,
Զի յեղեղուս է բընութեամբ ըստ իւր գոյին...
Հաս քնութեան ո՛չ ոք է չար եւ ո՛չ լինին,
Եւ ոի չարն է առարկութիւն որ փոփոխին,
Առարկութիւն գոյացութիւն ո՛չ է բնաւին,
Ուրեմն ապա, գոյացութիւնք չար ո՛չ ասին»⁴⁰:

Գարդափարի, մտքի, հոգեկանի, ժմացականի, բարու յաղթահանակը, չարի, կենդանականի, նիւթականի, մարմնականի, պարտութիւնը կարող են իրականացնուել միայն բանականութեան հարցի զիտական լուծման ճանապարհով: Բարոյական աստուածաբանութիւնը, գիտական փիլիսոփայութիւնը մշակում են օրէնքներ, կանոններ, որոնցով պէտք է առաջնորդուեր մարդը, որ է «Տէնպերքի դարդը», բոլոր շընչաւոր փակների առաջնորդը: «Քանզի եթէ ո՛չ է մարդկային սեռն, ամենայն անկատար գոյր», քանզի մարդն ստեղծուել է «վասն զարդարելոյ դրդալիսա»⁴¹, քանզի մարդն է «կենդանի բանաւոր մահկանացու, մտաց եւ հանձնարոյ ընդունակ»⁴² մեկնաբանում, զարգացնում է Դ. Անդրադիք՝ բարերով յայտնի, դարերին անհասանելի այս ճշշմարտութիւնները: Հոգու եւ մարմնի, իմացականի եւ կենդանականի, բարու եւ չարի հակամարտութիւնները պէտք է լուծուեն բանականութին, բանականութեան առաջնորդութեամբ, նրա յաղթանակով: Իրերի աշխարհը գուալու, կեանքը ճանաշելու, այն զարդարելու, զեկավարելու հարցում մարդով՝ չնչաւոր բանական գոյի իրաւունքը, գերը, կոչումը հաստատող այս հայեացքները, որ ինչպէս նկատեցինք, յասուել են վերածննդի ժամանակներին, ա՛հա, գիտական փիլիսոփայութիւնից եւ բարոյական աստուածաբանութիւնից ներթափանցում՝ են գեղարուեստական դրականութիւն եւ փիխանցուում նոր ժամանակներին: Նարեկացին էր միջնադարի այն հանձնարեղ քնարերգակը, որ իր «Մատեան ողբերգութեան» երկի կենտրոնական դէմքը զարձնելով մարդուն, նրա հաւաքական կերպարը, պաշտպանում է նրա դատը, իրաւունքը, ողբում նրան, քացարյալում նրան ցաւերը, տառապանք-

40. ԴԱԼԻԹ ԱՆՑԱՂԹ, Սահմանի իմաստափրութեան, Պուլս, 1731, էջ 320:

41. Անը, էջ 320:

42. ԴԱԼԻԹ ԱՆՑԱՂԹ, նրկան. փիլիսոփայականի, էջ 30, 42:

ները եւ ուղիները նշում նրա փրկութեան համար : Մարդն է կենդանական աշխարհի այն հզօր ոյժը, նկատում է Նարեկացին, որ կարող է խորսակել իր իսկ մեղքով, իր սխալմունքով, իր թուլութեամբ՝ իր անձի դէմ «կանգնած բոլոր բանակները», կանխել զբացութեան չար մոլուցքը, չափի մէջ դնել իր կրքերը եւ որպէս մարդ՝ «կանգնելու ոսքի» (Նարեկացի), ունենալ բանականի միտք, տրամաբանութիւն, երեսակայութիւն (Դ. Անյառթ), վերաստեղծուել, ինքնափոխուել, դառնալ կատարեալ մարդ՝ «Մարդ բանական», «մարդ հողածին» (Նարեկացի)՝ «վարքով անբասիր, կեանքով անթերի, աղնիւ ու ըդգաստ, հպարտ, աներեր, հաւաստվ հաստատ, հայեցքով պայծառ, պատկերով մաքուր», ինչպէս են՝ սրբերը, մարդարէները, հրեշտակները, ինչպէս են՝ Քրիստոսը, Մարիամը, ինչպէս է Աստուած ինքը. «Հերկեան բանական անդաստան», – առելքում է Նարեկացին, «Բարձրաց», աւզպի՞ր գետնարենի ընկած ծառս բանական» աղաչում է նա, «Լուսատքեամ», ի յիս վերատին».

«Աղաչեմ գանիոխարիների տէրութիւն ամենազօր հողւոյտ հզօրի, առաքեա՛ զցօղ քաղցրովթեան քոյ, եւ բարեգործեա՛ ի յանձին եւ յիշխանական աղդման գրայութեան զամենալից չնորոշ քաղմապարտեւ քողորմութեան : Եւ հերկեա՛ զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս՝ յընդունակութիւնը արգասեաց հողեւոր աերմանդ»⁴³:

Մարդն է ամենաթեանկազինը տիեզերքի բոլոր չնչաւոր գոյքերի մէջ, նաև է առաւել արժանի քո կարեցանքին, աղերում է Նարեկացին երկնային թագաւորին. ուրեմն թող քո ամենասես, բարի հայեացքը նախ եւ առաջ նրա վրայ բեւեռուի .

«Լուր բանական մարթողիս՝ հզօր եւ ողորմած, նախ քան երկնի եւ երկրի, եւ նա ցորենոյ եւ ոքինւոյ եւ ձիթոյ, եւ նոքա՝ իսրայելի : Եւ երկնաւորացն աղերս, որ առ քեզ հոգւոյս աղլեսցէ, քան թէ տարերաց ապականացուաց»⁴⁴:

18րդ դարը հայոց համար բանականութեան, ուացիոնարիզմի վերականգնան վար է : Հայ մտաւոր շարժման առաջադէմ գործիչները, աշխարհացրիւ, օսուր պետութիւնների ճնշումների ենթարկուած Հայ

43. ԳՐԻԳՈՐ ՆԱԲԵԿԱՑԻ, ՈՐԵԲԳՈՒՅԻՄ, էջ 199 (Դ.) :

44. Անդ, էջ, Ա4 (Բ.) :

ժողովրդին համախմբելու, նրա մէջ՝ ազգային ինքնաճանաշման, կոյատեռութեան գաղափարը արմատաւորելու նպատակով, ձգտում են վերստին ուժեղացնելու ռացինալիդմը կրօնի մէջ, ամրապնդելու հաւատքի եւ հայրենիքի, կրօնի եւ գիտութեան կապը, միասնութիւնը, գործնական գեր տալու հաւատքին: Խառարի Նարեկացու «Մատեան ողբերդութեան» պոէմի բանական այս հնչուացը եւս («Ո՞վ հաւատում է, նրան հնարաւոր է ամէն քան», «Ես հաւատոի չէնք պլիսի կառուցեմ», «Փակ հաւատը տեսակաւորուած գործով քարեաց» եւ այլն), անյաղթեան ճշմարիս փիլիսոփայութեան շաղախով, արճապանք է սունում գեղարուեատական գրականութեան մէջ, համում նաեւ նոր ժամանակների նշանաւոր բանաստեղծ գործիչների քնարին:

«Զիս, գմորականս ըդգօնացո՛,
պաշառոիմ առ քեզ.
Դարձո՛ ի բարիս ըստ քո հետոյն
արա՛, բանական»⁴⁵,

գոչում է Պաղտասար Դակիրը: «Ալի՛ր կենդանական չարութեան մորեակին գէնքն», աղերսում է նա: «ասպեցո՞վին», «կենաւործեա՞ զիս», «լուսաւորեա՞ գերիս», «տո՞ւր գորութիւն ընդդիմանալ ներհակին», «լե՞ր օգնական ի մարտի», «ապահպանիր զմեղ ի չար գարանէ», «ների՞ր ըպլերան հանեցոյ յանցանա», «լե՞ր թիկունա», «ազատիր ինձ մեղքերի ալեկոծող ծովից», «Տո՞ւր ինձ բանականի գորութիւն՝ խափանելու ծով մեղքերիս աննաւավար ընթացը», — թախանձում է Պաղտասար Դակիրը.

«Մով մեղաց զիս ալեկոծեաց,
բիւր չարիք զիս պատեցին,
Որպէս ըգնաւ աննաւավար,
ուր կամեցան վարեցին.
Կենդանականս այս գորութիւն
եղեւ ինձ ողեկ մոլեգին...»⁴⁶:

Զգայական անենակուզ կրքերը սանձահարելու, քանականութեան դիկավար դերը սպահովելու, մարդու կատարելութեան, ներդաշնակութեան խնդիրը արմատապէս լուծելու ուղիներից մէկը աստուածանմանութիւնն է⁴⁷: Մարդը պէտք է մասի նմանուելու՝ անշունչ, աննիւթական, ամենաբարի բանական գոյին՝ Աստծուն, որքան որ կարող է, որքան որ կը տանի իր էութիւնը: Մարդու աստուածանմա-

45. ՊԱՂՏԱՎԱՐ ԴՊԻՐ, Տաղարամ փաքրիկ, Պուհ 1768, էջ 57:

46. Տաղարամիկ սիրոյ, էջ 67:

47. Այս մասին տես «Բարձապէս», 1981, թիւ 3-4:

նութեան կամ աստուածայնութեան իմադիրը, ահա, որ բարձրացնում ու գարգացնում են հին եւ նոր բարերի վիլխոփայութեան հանձարեղ ներկայացուցիչները՝ Պղատոնն ու Դ. Անյառթը, ինչպէս նկատում է Ս. Արեւշատեանը⁴⁸, քրիստոնեայ եկեղեցու առաջին Հայրերը՝ Երանոս Լիոնացին, Գր. Աստուածաբանը եւ այլք, ինչպէս նկատում է Գ. Ալբարեանը⁴⁹, պաշտպանում ու վերարձարծում են նաեւ յնտաղայ զարերի վիլխոփաներն ու աստուածաբանները. «Զիմաստութիւն նմանութիւն Աստուածոյ ըստ կարողութեան մարդկան, - դրում է Դ. Անյառթը, - քանզի զի՞նչ այնպէս երաների են վայելու կատարումն, որպէս զի՞մանիլ Աստուածոյ ըստ կարողութեան մարդկան»⁵⁰: «Եւ զի իմաստասաէրն, - շարունակում է նա, - նման է Աստուածոյ աստուած յայտ եղիցի, քանզի որովք կերպարանի աստուածայինն, նոքիմքը կերպարանի եւ կատարեալ իմաստասաէրն: Քանդի երիւս այսոքիւկ աստուածայինն կերպարանի՝ բարեաւն եւ դիտութեամբ եւ կարողութեամբ»⁵¹: Գիտական վիլխոփայութեան, բարոյական աստուածաբանութեան միասնական այս հայեացքը եւս ներթափանցում է հայոց գեղարքուեատական գրականութիւն: Նարեկացին է 10րդ դարի այն հանճարեղ քնարերգակը, որն իր հոյակերտ պոէմի առանցքային հարցերից մէկն է դարձնում աստուածանմանութիւնը: Ո՞չ միայն վիլխոփան, այլ առհասարակ մարդը պէտք է ձգտի նմանուելու Աստուած, հասնի նրա էութեանը, իր մէջ կը նրա պատկերը, ունենայ նրա ներքին նկարագիրը, էութիւնը, որքան որ կարող է (Դ. Անյառթ եւ Նարեկացի): «Բո՞ նմանութեամբ պատկերիս փառօք»: Սա անշուշտ ստուկ միտսիկա չէ, այլ ճշմարիտ վիլխոփայութեան եւ բարյական աստուածաբանութեան համատեղ մի սրահանջ, որը բխում է կենանքը, դարերի ոգուց, էութիւնից, որ առջադրում է ժամանակը, կենանքը, այլ կերպ ասած՝ աստուածանմանութիւնը դատնում կը մի միջոց, մի ելք, որով մարդու կարող կը վերստեղծուել, վերափոխուել, կատարելագործուել... , «Նորոգ մաքրման» երթարկուել... :

«Եւ կամ իմ զի ըրհնացեալ պատկերս նորոգեսէ,
Առեալ գիրապարանիս բոլոր էութիւն,
Կերպին խակութեան մեծին Աստուածոյ՝
Միացոյց ինքեան անշուշտ խառնութեամբ»⁵²:

48. ԴԱՒԻԹ ԱՆՑԱՂԹ, Երկասիրութիւն, վիլխոփայակամբ, առաջաբան, էջ 7-9:

49. ԳԵՈՐԳ ԱՐԳԱՐԵԱՆ, Վերածնուրիմ Գրիգոր Նարեկացու «Յարութեամ» տաղի,

«Էջմիածին», 1974, էջ 43:

50. ԴԱՒԻԹ ԱՆՑԱՂԹ, Երկաս. վիլխոփայակամբ, էջ 66:

51. Անդ, էջ 67:

52. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Ոգբերգութիւն, էջ 380 (Կէ):

* * *

«Լուսաւորեամ ի յիս վերտափն զծաղկումն անատուեց
հրաշից գիտութեան աստուածութեան քոյ, հզօր,
արժանի լինել առնել եւ ուսուցանել
յօրինակ բարեաց աստուածաէց լսողաց . . .»⁵³:

18րդ դարի քնարերգութիւնը համեռամ է Նարեկացու «Մատեան ողբերգութեան» այս նուադը եւս: Պարտասար Դակիրը մի շարք երգերում ներկայացնուամ է այն մեծ արհաւախքներն ու փոթորիկները, որոնց բախտուամ է աստուածային պատերի դէմ մեղանչած մարդը.

«Ի պատկեր արարցին լուոյ աստեղծայ,
ի ըլքնութիւն քանակմին ընկալայ,
Բայց ի պատկեր անասնային փոխեցայ,
Զնոցինն իսկ բերելով յիս ըլքիերագարան:

* * *

Աւեր քաղաք եղեւ անձն իմ փ թշշնամեաց պատերազմէն, աւա՞ղ,
Յորուամ եւ ո՞չ տեղի մի բընաւ բընակելոյ մնալով չէն, աւա՞ղ,
Յորուամ եւ ո՞չ մի տեղի բընաւ բընակելոյ մնալով չէն . . .
Արդպէս յազպաղ կրկին դիմաց ունիմ տառապանս,
ո՞հ, ունիմ տառապանս . . .»⁵⁴:

Պարտասար Դակիրը եւս, իմազպէս, է Նարեկացու մօտ, նկատում է հոգու եւ մարմնի պայքարի հասարակական-սոնտեսական հիմքերը եւ ներկայացնուամ բանական գոյի անճար, թշուառ, անելանելի կացութիւնը՝ այդ հակասական, ընտրիմարերի ոյժերի մէջ.

«Ի մէջ երկոքին ներհակաց անկեալ
Տարուերիմ գերիս, ո՞հ, ո՞հ, տարուպերիմ.
Երբեմն միոյն, երբեմըն միոյն խրզքապաէս,
Ո՞հ գերի գերիմ գերիս, ո՞հ, ո՞հ, գերի գերիմ:
Այսպէս հանասպաղ կըրկին դիմաց
Ունիմ տառապանս, ո՞հ, ունիմ տառապանս,
Ուստի յարաժամ անդադար, անդում
Գեր երերիմ գերիս, ո՞հ, ո՞հ, գեր երերիմ . . .»⁵⁵:

53. Ամդ, էջ 200 (ԼՊ):

54. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղարամ փոքրիկ, էջ 45, 84:

55. Ամդ, էջ 86-87:

Պաղտասար Դավիթը իր դարի զաւակն է, Հայոց աղղային դասական փիլիսոփայութեան ու լանաստեղծութեան առաջադէմ աւանդների ժառանգութրդը։ Հոգու եւ մարմնի, բանականի եւ անբանի միջեւ եղած հակամարտութիւնները պէտք է լուծուեն մարդու վմացական եւ գրացական յատկութիւնների միջեւ ներդաշնակութիւն ասուղծելու ջանքերով, բանականութեան առաջնորդութեամբ։ Անյաղթեամ եւ Նարեկացիական այս երակէտով Պարտասար Դավիթը, ինչպէս նկատեցինք, խորանում է ժամանակի մարդկային փրոլութիւնների մէջ եւ տեսնում հասարակական, տնտեսական, արտաքին եւ ներքին յարաբերութիւնների նոր գծերը... Հաւատովի միամսնութիւնը ճախապայման է Հայ ժողովուրդի գիմադրողական պայքարի, ինքնաճանաչման, ինքնազխոակցութեան համար, առաւել որոշակի՝ Հայոց կրօնապղպային ներքին եւ արտաքին յարաբերութիւնները կարգաւորելու, Հայ ժողովրդի մէջ ազգային ինքնապաշտպանութեան, ինքնաճանաչման ողին վերաբնացնելու, Հայ համայնքը ի մի բերելու, հայրենի հողում համախմբելու եւ այլն...»

«Իու փող քաղցրաձայն՝ աւետեաց յուսոյն՝,
Մոլորեալ ազինս դարձուցիչ ի հօտն,
Որ ի խաւարէ անաստուածութեան,
Յաստուածապաշտութիւն կանչեցեր ըզմեզ:
Արդ, առ քեզ գոչեմք, ո՛վ Հայրը գլխած,
Հայցեամ՝ ի Տեառնէ մեզ ողորմութիւն,
Նեղեալ, տառապեալ սոհմիս խըրճաւոյ,
Տաղով գերելոցն՝ գերադարձութիւն.
Ըստ աղեսամաց սուրբ մարդարէին,
Ի մեր հայրենիս անդրէն ժողովին»⁵⁶:

«Այս տառապեալ որդւոց քոյին՝
Անդորրութիւն լինիլ հայցեամ՝,
Ըզկիրս անձինչ որ վասն մեր,
Տեսան առաջի տարածելով:
Որք ի մեղաց մերոց գանեալք,
Յերկիր օտար տարագրեցաք,
Դարձեալ անդրէն ողորմելով,
Ի հայրենիուս դարձուացէ»⁵⁷:

Եթէ Հայոց բանաստեղծութեան մէջ Ողբը յոյաի շաղախով, երբ չի դադարել... եւ ընդհակառակը՝ դարձել է առաւել հնչեղ ու

56. Անդ, էջ 64-65:

57. Անդ, էջ 66:

տարածում, ապա դժու ակունքը «Մատեան» է: Նարեկացու ողբերգութեան կախարդական հեջունեցները՝ միասիւսուած աղօք-քնիրի, շարականների կինսաքոյր մրմունչներին, կորենացու «Հայոց պատմութեան» Ողբի այցին 18րդ դարում նոր արձագանք են ստանաւ: Նարեկացին է Հայոց առաջին բանաստեղծ-պիլիսովա-տեսաբանը, որ հիմնաւորում է ողբը իրեւ համամարդկային յորդերի, քաղաքարի, հայի հոգեկան քամբերի արտաքերման եւ բուժման միջոց, մարդու սխարների, մեղքերի, խոստովանութեան, քաւութեան, մարդու վերափոխութեան, ասպաքինութեան հօրեղ զէնք: Ողբալով, հառաջանքներով, ցամատանջ գալարումներով կարող է մարդը աթափուել, իշխել ինքն իրեն, դանել կորցրածը, հասնել երազածին... Էլ ինչի՞ համար է ողբը, եթէ այն չպիտի բուժի... Ողբով կարելի է մաքրել, դուրս թափել հոգուամ կուտակուած մարձը, հանգստանալ, չափի մէջ դնել իմացական եւ մարմնական ցանկութիւնները...

«Եւ քանզի ընդ ողբաձայիշն բանաստեղծութեանց վերընծայելոց զդրութիւն թուոցն յարմարեացի կական եւ հեծութիւն, հառաջանք կողկողագին, դառնութեան շարուան եւ արտասուաց երգ, դարձեալ ըսկսաց դնառ պաղատանացս խոստովանորէն զդմականաբար գաղտնածածուկն յայտնաբարբառ, զի անողբարարութութեամբ ակզմանքն եւ վերջաւորքն բառիւք, զնոյն համաձայնութիւն ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն ինոնարհութեան աստանօր երից»⁵⁸:

Նարեկացին քնարարեան բանաստեղծութեան բազմաձեւ օրինակների միջոցով, գործնականորէն հիմնաւորում է իր տեսական հայեացքները՝ ողբի, պղման, ապաշխարանքի, աղերսանքի մասին, որոշում նրանց բնոյթն ու էսթիւնը: Դրանք «Հոգեկորոյա» եւ «Ճարմանակրծան» բանական գոյին ինքնափոխութեան, վերաստեղծման Նարեկացի-գեղագէտի աշխարհընկարման արտայայտչականական եղանակներն են, որ գալիս են ոգեւեւ հեթանոսական շրջանից...: Հանճարեղ երգիչը մի յետադարձ հայեացքով ներթափանցում է Հայոց հեթանոս երգերի ակունքները եւ կազ, ընդհանրութիւններ տեսանում նրանց «քալական», «ողբատկան» երգերի եւ քրիստոնեայ հայրերի երգերի միջեւ եւ ողբը վերատին, նորովի հնչեցնուած իր հանճարեղ քնարի վրայ: Նարեկացին բացում է մեղքի, պղման գիտակ-

58. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, Ողբերգութիւն, էջ 143 (հէ):

ցութեամբ տառապող, այդ ժամկից գալարուող մարդ լրանականի հարուստ հոգէաշխարհը եւ այս գիծն է, որ փոխանցւում է դարձից դար...

«Մեղա՛յ, մեծիդ գարերարութեան՝
անարդս մեղայ,
Մեղա՛յ, ճազմանդ ճառագայթից՝
խաւարս մեղայ,
Մեղա՛յ, չնորհացդ անքաւ երախտեաց՝
արդարեւ մեղայ,
Մեղա՛յ, աիրոյդ վերնուամ վլթութեան՝
յայտնապէս մեղայ...»⁵⁹:

Ընդհանուր բանաստեղծութեան արուեստի, տեսութեան (պոէտիկայի) պատմութեան մէջ յայտնի չէ... մի բացազանչութեան դործադրութիւն, գեղագիտական ըմբռնման նման չափի ու խորութեան ընդհանրացւմներ, այն էլ հենց քնարական տաղերի բուն հիւսուածքի մէջ...

«Մեղա՛յ, աննուազ լուսոյդ վայելման՝
նենդորս մեղայ,
Մեղա՛յ, ճաշակման անճառդ կենաց՝
բազումս մեղայ,
Մեղա՛յ, անհաս պարզեւացդ ձրից՝
հանսպազ մեղայ,
Մեղա՛յ, գովեալ մալոնյդ Աստուծոյ՝
մահու չափ մեղայ...»⁶⁰:

Եւ այսպէս նոյնաբառ, նոյնաճայն բացագանչութեամբ տողերի սկիզբը եւ վերջը «մեղայ» բառով շաղկապելով, նարեկացին առևմանում է ողբի այս տեսակի իմացական հիմքը, որն եւ ինչպէս ինքն է ասում, բանաստեղծութիւնը բարձնուամ է «առաւել ազդու եւ հոգեպարար»: Յանկարծական, յուզալեցում «մեղայ» բացագանչութիւնը դառնուամ է՝ սպեղանի «մեղալից Շոկու», «յուստադրութիւն»՝ սըրտի, կերպարանաւորուամ է իրբեւ «անմոռաց պատկեր», զառնուամ է՝ «առանդ», «հայրենական տուրք», «պապական օրէնք», «անհերքելի խօսք», տղբեղ պատասխան», «կենսակապ կամուրջ», «հիւսքանչ բարդառուա», «քաղաքալի աղերս», «անճարների մար», «արուեստ բարձրութեան», «իստրութիւն անջափի»: Բատ բանաստեղծի՝ անլերջանաբի, անսպառ են «մեղայ» բառի բարեմասնութիւնները.

59. Ամդ, էջ 143-144 (հէ):

60. Ամդ, էջ 144 (հէ):

«Ահա, արդարեւ օրհնեալ է Հատուած բանի
յուսադրական սրտի այրո՞ւ մեղացի,
սոյն սա պատուիլի աւանդ, անմոռաց պատկեր,
հայրենեացն սուր, նախահարցն օրէն,
համայնից թօշակ, անհերքելի բան...
անշրջելի պատճառ, բաղձալի աղերս,
փախագելի սեղան, սրտարելի հնչուան,
անհնարից ճարակ, կարծուաթեամ վամիչ,
սաստուածապաշտից տահման, հեթանուաց գիրք,
վաղնուց կանոն, քրիստոնէից հարազատ,
արարուութեանն յաղթող, անջրակետ հզօր,
խորոց ահաւոր, արուեստ բարձրութեան,
խորութիւն անչափ, հիացման տեսիլ...»⁶¹:

Նարեկացու «մեղայ» ձայնարկութիւնը եւ նման այլ բացագան-չութիւններ, իրենց իմացական, աղդու եւ հոգեպարար նշանակութեամբ կիրառուած է Պաղտասար Դակիրը իր բանաստեղծութիւններում.

«Իժը եղենմային, օձը ժանդական,
իսկականի բարույդ՝ չարաչար մեղայ,
Ծառայս աղիսալական եւ տարագրական,
Արքայից արքայիդ՝ անդադար մեղայ...»

Ակնըս արաստատես ումիմ ըդգերան,
Ըստ ամենաստեմիդ յանդիմանութեամ,
Ո՛չ կարեմ նըլսատիլ վինչ բարյական,
Վասն որոյ եղելիս միշտ եւ յար մեղայ...»⁶²:

«Մեղայ, քեզ, Տէր, մեղայ, մեղայ,
բիւր չարիս գործեալ մեղայ,
Անօրինեալ, անառակեալ
մայր մեղաց, եղեալ մեղայ...»⁶³:

Նարեկացին «տահման չունեցող իր» հոգեկան ողբերի (իէ) մի-ջոցով մեկնաբանուած վողման խորին խորհուրդը, բայցորոշում նրա ապաքինիչ յառկութիւնը, նրա գերը՝ «տարանող կորցրած», «կիրքը ապաքինիչ յառկութիւնը», մասհեծը ընկած», մարդու՝ «բանահողում թողած» (իդ) «մեղքերի մահման» մեղքերի մահման մասին:

61. Ամոր, էջ 144-Ա45 (իէ):

62. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղարան փաքրիկ, էջ 46-47:

63. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղարանիկ սիրայ..., էջ 68:

բեկացու ողբը մեծ նստուածք է թողնում յետագայ բոլոր դարերի եւ յատկապէս 18րդ դարի բանաստեղծութեան մէջ։ Պաղտասար Դպրի քնարական երգերի մի զգալի մատի իշխող եղանակը Նարեկացիական ողբն է, հառաչանքը, զղլումը, ապաշնարանքը, «լեռան հանդոյն մեղքերի» խոստովանութիւնը։ Իրեւ անցման շրջանի բանաստեղծի, նրա մօտ ուժեղ են հին եւ նոր, դասական եւ ժողովրդական բանարուեստի բնորոշ գծերը՝ երկուատեք համազօր։ Պաղտասար Դպրի մօտ նոյնահնչուն, նոյնաձայն բառերը, բացադանչութիւնները, շեշտուգրութիւնները, կրկնութիւնները, ախերը, վախերը, ոհերը, աւաղները բանաստեղծական նոր հիմունացքի, նոր չափի ու հանդի մէջ ունեն հնի եւ նորի բուրմունք, դառնուած են նոր համաձուլուածք։ Դա հենց վերանորոգութեան կամ անցման շրջանի բանաստեղծութեան արցւեստի բնորոշ գծերից մէկն է։

«Աւա՛ղ փնձ որ ի կեանս եկի,
Զօդուան իմ ո՛չ դարակեցի,
Զթաքուն գանձն ի յաղալակի.
ո՛չ գլուի, ո՛չ գըսի։

* * *

Ղեկն իմ, ահա՛, խորտակեցաւ,
Կամ տատանեալ տարուրերեալ,
Ո՛վ յարաժամ օգնական իմ,
Հա՛ս ի թիկունս եւ լե՛ր ինձ յոյս,
Յոյս, Մարիամ կոյս»⁶⁴։

* * *

«Լինիմ, զոր ինչ ոչն կամիմ,
Թէսկէտ կամիմ, զոր ո՛չ լինիմ, աման,
Ահա՛, այս է, որ կողկողիմ,
Այո՛, այո՛, այո՛, եղէ մողկելի, եղկելի»⁶⁵։

Միիթար Մեբաստացուց յետոյ Պաղտասար Դպիրն է 18րդ դարի երկրորդ նշանաւոր գործիչը, որ հոտոտում, վայելուամ է Նարեկացու յաւերժութեանը կոտակած «քնական նուէլը» (ԶԼ), «Մաստեան ողբերգութեան» պոէմը եւ կենսագործում հանճարեղ բանաստեղծի պատուիրանը։

64. Անդ, էջ 17, 77:

65. Անդ, էջ 89։

«Եւ արդ, ընկալ զայտ հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց,
եւ հոտոտեցիւ յայտ նուէր բանի անարիւն գոհի.
թաղաւոր երկնի եւ օրհնեալ արբեա' զտառ մատենի յայր ողբերգու-
թեան,
եւ գրեալ ողբոշմեսցես յարձան յաւիտեան ընդ հաճոյականացն
տպասաւորովիւնս...»

Սոյն դիր իմովս ձայնիւ, իբր զիս, ընդ իմ աղաղակեսցէ,
տարածեացէ գծածկեալան, հոչակեացէ զդաղտնիւն,
կականեսցէ գկատարածն, հնչեացէ զմուացեալան,
քարողեսցէ զիսորցն, պատմեսցէ զմեղացն,
մերկացուացէ զանտեսիցն, ցուցցէ զկերպարանս թաքուցելոցն»⁶⁶:

Պաղտասար Դալրի վերեւուամ յիշատակուած երգերուամ ներքին հո-
տանքով ուժեղանուամ է իրավանութեան նարեկացիական քննադատա-
կան, ճանաչուական արուեստով ինքնադատանքի եւ փորատանքի գիծը.
բանաստեղծի «Ձմ անիրաւ բատաւորն քարտաթիւ», «Ո' ակզբանէ հոգ-
ւոյս ոստին աղոտեղի», «Ո' միութիւն զարմանալի», «Զախմանալով
զարմացայ ես ի մըսի», «Ո' դու մանուկ գեռուհասանկ», «Ո' նեղե-
լոց մինիթարիչ», «Ո' համայնից փասփագելի», «Ուստի՞ ծնար, ո' վ
բռնաւոր» եւ այլ բանաստեղութիւններուամ հանդիպուամ են արդէն
սոսկ մարդկային իրոդութիւնների բացարյայտ, անողոք քննադատու-
թեանը: Դրանցուամ Պաղտասար Դալրը մերկացնուամ է տարբեր հա-
սարակական շերտերի միջեւ եղած հակասութիւնները, դրամի, ոս-
կու աւերիչ գերը մարդկային փոխարաբերութիւնների տարբեր
որդուներուամ եւ այն.

«Ուստի՞ ծընար, ո' վ քրնաւոր,
Որ քեզ նըման ո'չ գոյ յերկրի,
Որ թէ չըտաս դու մեռն ումեք,
Ո'չ զօրանայ, եւ ո'չ քերկրի:

Թէ թադաւորք եւ թէ կայսերք,
Քո օգնելոյդ են միշտ կարօտ,
իսկ առանց քո՝ մեն յոյժ տըկար,
Որպէս արջառ մի անարօտ:

Մինչ կորումիչ ես դու հոգւոց,
եւ ծընանիս անհուն չարիս,
Բաղուամք լողերդ միջնորդ եղեալ,
Յանաջ քերին բազուամք բարիս:

66. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Ոպերգուրիս, էջ 507-508, 609-510 (2Հ):

Այնքան սիրով կապին մարդիկ,
Քո կապանօքդ եւ կարկամին,
Որ որքան կապ ձգես նոցին,
Այլ առաւել կապիլ կամին»⁶⁷:

* * *

Այսպէս ուրեմն՝ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի ճանաչողական արուեստն ու քննադատական ողջին խորապէջա ներգործում է 18րդ դարի Հայոց վերանորոգուող գեղարուեստական գրականութեան, եւ յատկարիս ողբի եւ աթափման բանաստեղծութեան վրայ: Գրական այս ընթանուր երեւոյթի արգասիք է Պաղտասար Դաղրի քնարի նարեկացիական լարը... Պաղտասար Դաղրից յետոյ Յակոբ Նալեանը, Պետրոս Ղափանցին եւ Պետրոս Նախիջևանցին են այն խոշոր բանաստեղծները, որոնց գրական աստեղծաուրծութեան վրայ, տարբեր արտայալոշական եղանակներով, որոշակի աղդեցութիւն է գործել Նարեկացին ու նրա «Մատեան ողբերգութեան» հանճարեղ երկը:

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ

Résumé

L'INFLUENCE DE GRÉGOIRE DE NAREK AU XVIII^e SIÈCLE ET SON REFLET DANS LA POÉSIE DE BAGHDASAR DEPIR

CHOUCHANIK NAZARIAN

Au XVIII^e siècle, les Arméniens ont particulièrement apprécié «Le livre des lamentations» de Grégoire de Narek. Etant venu de l'Inde à Venise, le prêtre Ignatios de Djoulfa y fait publier à son compte un recueil de «Narek» en 1763, date à laquelle paraît à Constantinople le texte complet du «Livre des lamentations» d'après de bons manuscrits, sous la surveillance du Patriarche Hakop Nalian.

L'édition de 1726, parue à Constantinople, mérite une appréciation spéciale, car les éditeurs sont des hommes célèbres de l'époque, tels le Patriarche Yovhannès Kolot et Grigor Cheghtayakir de Chirvan, aidés grandement par Baghdasar Depir. Cette publication, précieuse pour ses indications marginales des références de citations ou d'allusions bibliques dans le «Livre des lamentations», a été à la base d'éditions ultérieures.

L'auteur de l'article analyse les idées principales du «Livre des lamentations», montre comment Grégoire de Narek a parfaitement réussi à refléter, sous forme de prières, des sentiments propres à toute l'humanité, notamment la faiblesse et la misère de la nature humaine, son enlisement dans le péché, la seule issue pour en sortir étant le rapprochement et la ressemblance avec Dieu.

Ch. Nazarian indique la profonde influence de Grégoire de Narek sur divers auteurs. Et comme il serait impossible de parler de tous, elle se concentre sur les œuvres de Baghdasar Depir. De nombreuses citations à l'appui, elle montre que celui-ci a suivi de près le grand poète, en assimilant ses idées.